

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-րդ գոխարոխ | Երկրորդ քեչոՒՅՑ

ՓԵՏՐՎԱՐ - ՀՈՒՆԻՍ | 2013



ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | ԵՐԿՐՈՐԴ ԶԵԿՈՒՅՑ
ՓԵՏՐՎԱՐ - ՀՈՒՆԻՍ | 2013

Սույն զեկույցում տեղ գտած տեսակետների և վերլուծությունների հեղինակը «Մանդապ» հասարակական կազմակերպությունն է, որն էլ պատասխանատու է բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հետևաբար չեն ներկայացնում Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն վերլուծության բովանդակությունը կարող է չհամընկնել Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին: Զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Բայ հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ ԶԼՄ-ների աջակցման ծրագրի շրջանակներում:

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի երրորդ նստաշրջանի գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ:

Զեկույցը կազմված է 5 բաժնից: Առաջին բաժնում ամփոփվել են երրորդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանի գործունեության ընդհանուր միտումներն ու ցուցանիշները, ներկայացվել են ԱԺ խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«ԱԺ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել խորհրդարանի վերահսկողական գործառույթներին: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվեպվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից:

«Օրենսդրություն» բաժնում ներառվել են գարնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենսդրական փաթեթներից մի քանիսի դիտարկման արդյունքները՝ կատարված լրագրողական և փորձագիտական աշխատանքների համադրմամբ: Յուրաքանչյուր օրենքի վերաբերյալ ներկայացվել է խորհրդարանական քննարկման ընթացքը, խմբակցությունների արտահայտած դիրքորոշումները համեմատվել են ծրագրային մոտեցումների հետ, տրվել փորձագիտական գնահատականներ:

Չորրորդ բաժնում ամփոփվել են 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած Էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները: Զեկույցում անդրադարձ կա նաև պատգամավորների բացակայությունների խնդրին՝ դրա նկատմամբ ԱԺ ղեկավարության ուշադրության մեծացման և Սահմանադրական դատարանի՝ հարցին առնչվող որոշման վերլուծության տեսանկյունից:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում ներառված են օրենքների փորձագիտական վերլուծությունները:

Փորձագիտական խումբ

Գոռ Աբրահամյան
Վիլեն Խաչատրյան
Ավետիք Իշխանյան
Արտակ Զեյնալյան

ՑԱՆԿ

Նստաշրջանը թվերով	4
ԱԺ խմբակցություններ / օրենսդրական նախաձեռնություններ, ակտիվություն /	9
Հայաստանի հանրապետական կուսակցություն	9
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	10
Հայ ազգային կոնգրես	11
«Օրինաց երկիր» խմբակցություն	12
«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն	13
«Ժառանգություն» խմբակցություն	14
ԱԺ վերահսկողությունը	15
ԿԸՀ հաղորդագրությունը	16
ՄԻՊ գեկույցները	16
Կառավարության ծրագիրը	17
Բյուջե 2012-ի կատարողականը	19
Վերահսկիչ պալատի հաշվետվությունը	20
ԱԺ օրենսդրական գործունեությունը	26
Այլընտրանքային ծառայություն	27
Ծրագրային բյուջեարավորում	31
Արտոնագրերի կրճատում	35
Գենդերային հավասարություն	37
ԱԺ էթիկայի հանձնաժողովը	41
Բացակայությունների խնդիրը Ազգային ժողովում	44
ՍԴ որոշումը պարզամավորների բացակայության խնդրի վերաբերյալ	44
Հավելված. Փորձագիտական վերլուծություններ	51

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ՀՀ Ազգային ժողովի 5-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 քառօրյա նիստ: Կառավարության նախաձեռնությամբ հրավիրվել է 1 արտահերթ նստաշրջան՝ հունիսի 17-20-ը: Ընդունվել է 95 օրենք. 5-ը մայր օրենքներ են, մնացածը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 79-ի հեղինակը կառավարությունն է (դրանցից 10-ը կառավարությունն անհեղինակ է համարել), 15-ինը՝ ԱԺ պատգամավորները, 1-ը՝ համատեղ: Մոտ 1/3-ը (31 օրենք) ընդունվել է արտահերթ նստաշրջանի ընթացքում: Դրանց գրեթե կեսի 2-րդ և 3-րդ ընթերցումները կազմակերպվել են 24-ժամյա ռեժիմով: 95 օրենքներից 21-ը խորհրդարանն ընդունել է հատուկ կարգով:

Ընդունված օրենքների մոտ կեսը՝ 42-ը, վերաբերում է սոցիալ-տնտեսական ոլորտին, 27-ը՝ պետաիրավականին, 8-ը՝ պաշտպանությանը և ներքին գործերին, 7-ը՝ կրթության ոլորտին, 6-ը՝ տարածքային կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանը, 2-ը՝ առողջապահությանը, 3-ը՝ մարդու իրավունքներին:

Ազգային ժողովը քննարկել է 10 ծրագիր, հաշվետվություն և հաղորդում: Որոշումներ է ընդունել ՀՀ կառավարության ծրագիրը հավանության արժանացնելու, 2012թ. պետական բյուջեի կադարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:


Խորհրդարանը քննարկել և մերժել է ընդդիմադիր խմբակցությունների հեղինակած նախաձեռնություններից երկուսը: Դրանցից մեկով «Ժառանգությունն» առաջարկում էր փոփոխություններ կատարել Ընտրական օրենսգրքում, մյուսով ՀԱԿ-ն առաջարկում էր ստեղծել 2008թ.-ի մարտիմեկյան դեպքերի ուսումնասիրությանն առնչվող ժամանակավոր հանձնաժողով:

Ընդհանուր դիտարկումներ

■ Օրինաստեղծ աշխատանքում խորհրդարանի նախաձեռնողականության մակարդակը նախորդ նստաշրջանների համեմատ աճել է: Եթե, օրինակ, հինգերորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում օրենսդրական նախաձեռնությունների կառավարություն-ԱԺ փոկոսային հարաբերակցությունը 94/6 էր, ապա երրորդ նստաշրջանում 84/16 է:


ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

Օրենսդրական նախաձեռնություններ



■ ԱԺ 5-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանական մեծամասնությունն ամբողջովին պահպանել է քվեարկությունների տրամաբանությունը. ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիան միշտ հավանության է արժանացրել կառավարության ներկայացրած նախագծերը և դեմ քվեարկել բացառապես ընդդիմության նախաձեռնություններին: Խորհրդարանական մեծամասնությունը դեմ է արտահայտվել քվեարկված օրինագծերի հազիվ 1 փոկոսին: Սա խորհրդարանի քաղաքական մեծամասնության և կառավարության կոնսուլիդացիայի գերբարձր մակարդակի ու դրա շարունակականության ցայտուն վկայություն է:

ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի քվեարկությունների պատկերը




■ Ըստ հարցերի ու ելույթների¹ վիճակագրության՝ դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է ՀՀԿ խմբակցությունը (176 հարց ու ելույթ), ամենացածրը «Ժառանգության» արդյունքն է (20 հարց ու ելույթ): Սակայն ակտիվությունը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս ստացվում է, որ ՀՀԿ պարզամավորներից յուրաքանչյուրը միջին հաշվով հարց փոխել կամ ելույթ ունեցել է 2,5 անգամ, իսկ «Ժառանգության» պարզամավորները՝ մոտ 4 անգամ: Այս տեսանկյունից խորհրդարանում ամենապասիվը եղել է ԲՀԿ-ն, իսկ ամենաակտիվը՝ ՀՅԴ-ն:

¹ParliamentMonitoring.am կայքի վիճակագրությունը կազմվում է միայն օրինագծերի քննարկումների և քվեարկությունների հիման վրա:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

ԱԺ խմբակցությունների ակտիվությունը



■ Դիտարկված նստաշրջանի ընթացքում նույնպես, ինչպես նախորդում, խորհրդարանը չի օգտվել առանձին խնդիրների ուսումնասիրման և իրողությունների բացահայտման նպատակով ժամանակավոր հանձնաժողովներ ձևավորելու իր իրավունքից, թեև ընդդիմադիր խմբակցությունները հանդես են եկել մի քանի նման առաջարկներով: Մասնավորապես, 2008թ.-ի մարտիմեկյան դեպքերի ուսումնասիրությանն առնչվող ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու վերաբերյալ ՀԱԿ-ի նախաձեռնությունը, տևական քննարկումներից հետո, այս նստաշրջանում մեծամասնության ջանքերով ի վերջո փաստալվեց:

■ 3-րդ նստաշրջանի ընթացքում կառավարությունը անհետաձգելի է համարել 6 օրենսդրական նախաձեռնություն՝ առանց դրանց հրապապ ընդունումը հիմնավորող ծանրակշիռ փաստարկների: Իսկ Ազգային ժողովը 22 որոշում է ընդունել օրինագծերը հատուկ կարգով քննարկելու և ընդունելու մասին, դրանցից 15-ը՝ արտահերթ նստաշրջանի ընթացքում: Թվերը փաստում են, որ այս նստաշրջանում էլ խորհրդարանը հաճախ պատշաճ ժամանակ չի հատկացրել օրինագծերի քննարկմանը:

■ Անցած 17 տարիների ընթացքում Սահմանադրական դատարանը միայն 4 անգամ է ԱԺ պատգամավորների նախաձեռնությամբ ներկայացված հարց քննարկել: ՄԴ ապրիլի 16-ի որոշումը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց ԱԺ կանոնակարգ օրենքի՝ պատգամավորների բացակայությունների հարցը կարգավորող 4 դրույթ: ՄԴ որոշմանը խորհրդարանը որևէ կերպ չարձագանքեց, հակասահմանադրականությունը շարժելու նախաձեռնություն չույսերեցին ոչ խորհրդարանական մեծամասնությունը, և ոչ էլ ընդդիմությունը:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

- Փոխարենը պարզամավորների բացակայությունների խնդիրը ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ 3-րդ նստաշրջանի ընթացքում աննախադեպ ուշադրության արժանացավ: Նրա հանձնարարությամբ ԱԺ աշխարհակազմը սկսեց հրապարակել պարզամավորների անհարգելի բացակայությունների վիճակագրությունը, որի հիման վրա անհարգելի բացակայած պարզամավորների նկատմամբ սկսեցին կիրառվել կարգապահական տույժեր՝ աշխարհավարձի մասնակի կամ ամբողջական չվճարման տեսքով: Մասնավորապես, մարտ-ապրիլ ամիսներին անհարգելի բացակայած 76 պարզամավորի աշխարհավարձից պահվեց մոտ 2,5 մլն դրամ:
- 5-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանի օրակարգը աննախադեպ հագեցած էր խորհրդարանի վերահսկողական գործառույթի շրջանակի հարցերով՝ 4 ծրագիր, 3 հաշվետվություն, 2 զեկույց և 1 հաղորդագրություն: Այս տասը փաստաթղթերի կեսից ավելին խորհրդարանում արժանացել է տրևական և բուռն քննարկման:
- Փաստացի՝ 3-րդ նստաշրջանի լիազուստր նիստերի ժամանակի, մտավոր հաշվարկով, գրեթե կեսը հատկացվել է ծրագրեր-հաշվետվություններ-հաղորդումներ լսել-հավանության արժանացնել-հաստատել-ի գիտություն ընդունելուն և մյուս կեսը՝ 95 օրենքների ընդունմանը, որոնց մեծ մասը մեկից ավելի ընթերցումներ է անցել:
- Ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ օրենքների մոտ կեսը 3-րդ նստաշրջանում ընդունվել է առանց շահագրգիռ քննարկման (հարց ու ելույթներ չեն եղել): Օրենքների 25 տոկոսը կամ յուրաքանչյուր 4-րդ օրենքը ընդունվել է հատուկ կարգով:
- Հինգերորդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել է 14 նիստ, սրացել է 6 դիմում, որոնցից վարույթ է ընդունել միայն մեկը: 5 դիմում մերժել է վարույթ ընդունել, վարույթ ընդունված միակ դիմումի առնչությամբ կայացրել է բացասական եզրակացություն:
- 3-րդ նստաշրջանի ընթացքում հանրային սեկտորից՝ քաղաքացիներից և հասարակական կազմակերպություններից սրացված դիմումների քանակը կիսով չափ կրճարվել է, ներկայացված դիմումների գերակշիռ մասը կամ վարույթ չի ընդունվել, կամ էլ մերժվել է վարույթ ընդունվելուց հետո: Ըստ փորձագիտական գնահատականի՝ վիճակագրությունը վկայում է էթիկայի հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության անկման մասին:

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ԹՎԵՐՈՎ

■ Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում ամենաշատ բացակայած պարզամավորը ԲՀԿ խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանն է, ամենաակտիվ պարզամավորը ՀՅԴ-ից Արծվիկ Մինասյանն է, ամենաշատը դեմ քվեարկել է ՀԱԿ-ից Նիկոլ Փաշինյանը, ամենաշատը կողմ քվեարկած 10 պարզամավորներից 9-ը հանրապետականներ են, կայքի «Պարզամավորներ» բաժնի ամենաշատ այցելված էջը ՀԱԿ-ից Հրանտ Բագրատյանինն է:

■ 5-րդ գումարման ԱԺ-ի աշնանային և գարնանային նստաշրջանների ընթացքում www.parliamentmonitoring.am կայքի միջոցով քաղաքացիները պարզամավորներին ուղղել են 43 նամակ: Դրանց արձագանքել են պարզամավորներից միայն երկուսը՝ Նաիրա Զոհրաբյանը և Արծվիկ Մինասյանը:

43 նամակներից միայն 13-ն են ինչ-որ չափով վերաբերել հարցերի օրենսդրական կարգավորմանը: Գերակշռող մասը բովանդակել է սուցիալական բնույթի մասնավոր հարցեր. ապահովել աշխատանքով, լուծել բնակարանային խնդիր, ֆինանսավորել վերջին զանգի միջոցառումը, վճարել կոմունալ և ուսման վարձերը: Եղել են Սամվել Ալեքսանյանի հետ հանդիպելու, մեքենա ձեռք բերելու հարցում օգնության խնդրանքներ: 43 նամակներից 5-ը հասցեագրվել են Հովիկ Աբրահամյանին, 5-ը՝ Սամվել Ալեքսանյանին, 7-ը՝ Գագիկ Ծառուկյանին:


ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՃԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հանրապետական կուսակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում ՀՀԿ-ն հեղինակել է 22 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից 6-ը ընդգրկված են 5-րդ գումարման Ազգային ժողովի հաջորդ`4-րդ նստաշրջանում: Նստաշրջանի օրակարգ ընդգրկված ևս 1 նախագիծ 2013-ին լրամշակվել է: Շրջանառության մեջ դրված 14 նախագիծ նստաշրջանի օրակարգում դեռևս ընդգրկված չէ: Դրանցից միայն 8-ն է խմբակցությունը հեղինակել 2013թ.-ին:

3-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է ՀՀԿ-ի հեղինակած 8 օրենսդրական նախաձեռնություն:



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության`

ՀՀԿ խմբակցության ամենաշատ հարց տրված և ելույթ ունեցած պարզամավորը Խոսրով Հարությունյանն է: Ամենաշատ կողմ քվեարկածները (194 անգամ) չորսն են` Հայկ Գրիգորյան, Մկրտիչ Մինասյան, Գալուստ Սահակյան, Կարինե Պողոսյան: Ամենաշատը դեմ է քվեարկել Վահե Հակոբյանը (4), ձեռնպահ` Հակոբ Հակոբյանը (Գառնիկի): Ամենաշատ բացակայածը Կարեն Կարապետյանն է, ամենաշատ չքվեարկածը` Մանվել Բաղետյանը:

Խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած 10 պարզամավորներից 9-ը հանրապետական են: Փոխարենը ոչ մի ՀՀԿ-ական չկա ամենաշատ դեմ ու ձեռնպահ քվեարկածների փասնյակներում: 10 ամենաշատ բացակայածներից խմբակցության անդամ է միայն 1-ը, իսկ ամենաակտիվ պարզամավորների փասնյակում կա ՀՀԿ 4 պարզամավոր:


Ամենաշատ այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) 10 էջերից 5-ը հանրապետականներին են:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում ԲՀԿ-ն հեղինակել է 8 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից 5-ը դրված է շրջանառության մեջ, սակայն նստաշրջանի օրակարգ չի ընդգրկվել: 3 օրենսդրական նախաձեռնություն 3-րդ նստաշրջանից տեղափոխվել է 4-րդ նստաշրջանի օրակարգ:

3-րդ նստաշրջանում ԲՀԿ-ի հեղինակած որևէ օրենսդրական նախաձեռնություն չի քննարկվել և չի ընդունվել:



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում

ԲՀԿ խմբակցության պարզամավորներից ամենաշատը ելույթ է ունեցել Նաիրա Զոհրաբյանը՝ 8, ամենաշատը հարց է տվել Ստեփան Մարգարյանը: Նա նաև ամենաշատ ձեռնպահ քվեարկած ԲՀԿ-ականն է՝ 57: Խմբակցությունից ամենաշատը չի քվեարկել Դավիթ Քոչարյանը՝ 119: Ամենաշատը դեմ քվեարկել է Գուրգեն Արսենյանը-16, կողմ՝ Գրիգորի Մարգարյանը՝ 128: 184 բացակայություններով Գագիկ Ծառուկյանը խմբակցության ամենաշատ բացակայած պարզամավորն է:

Այս ցուցանիշով նա գլխավորում է նաև խորհրդարանի ամենաշատ բացակայած պարզամավորների փասնյակը: ԲՀԿ-ից այս փասնյակում կա ևս 4 պարզամավոր:

Ամենաշատ կողմ ու դեմ քվեարկած, հարց և ելույթ ունեցած պարզամավորների փասնյակներում ոչ մի ԲՀԿ-ական չկա:

Ամենաշատ ձեռնպահ քվեարկածներից ԲՀԿ-ական են 4-ը:


Ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) 10 էջերից 3-ը ԲՀԿ պարզամավորներինն են:

ԱԺ ԽԱԲԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայ ազգային կոնգրես

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանում, ինչպես 2-րդում, ՀԱԿ-ի հեղինակած որևէ օրինագիծ չի ընդունվել: Խմբակցության ոչ մի նախաձեռնություն զլխադասային հանձնաժողովներում դրական եզրակացություն չի ստացել ու նիստերի դահլիճում չի քննարկվել՝ բացառությամբ մեկի: ՀԱԿ-ը այս նախաձեռնությունը հեղինակել էր 2012-ին. այն վերաբերում էր մարտիմեկյան դեպքերի ուսումնասիրությանն առնչվող ժամանակավոր հանձնաժողովի ստեղծմանը: Քննարկման մի քանի փուլ անցնելուց հետո նախագիծը 2013-ին, լիազումար նիստում, մերժվեց:

ՀԱԿ-ը ունի 2012-ից շրջանառության մեջ դրված, բայց դեռևս նստաշրջանի օրակարգ չընդգրկված 5 նախաձեռնություն: Դրանց ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով: Հետաձգված նախագծերից 1-ը հեղինակել է ՀԱԿ խմբակցությունն ամբողջ կազմով՝ բացի Հրանտ Բագրատյանից: Մյուս 4-ի հեղինակը Հրանտ Բագրատյանն է: Հրանտ Բագրատյանի հեղինակած 2 նախագծի ընդգրկում նստաշրջանի օրակարգ մերժվել է պարզամավորների քվեարկությամբ:



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում

ՀԱԿ խմբակցության ամենաշատ հարց տրված, կողմ ու դեմ քվեարկած պարզամավորը Նիկոլ Փաշինյանն է. հարց՝ 18, կողմ՝ 79, դեմ՝ 82: Ամենաշատը ելույթ ունեցել է Հրանտ Բագրատյանը՝ 19, բացակայել է Ստեփան Դեմիրճյանը՝ 101, չի քվեարկել Լյուդմիլա Սարգսյանը՝ 25, ձեռնպահ է քվեարկել Լևոն Զուրաբյանը՝ 47: Խորհրդարանի ամենաշատ կողմ ու ձեռնպահ քվեարկած և ամենաշատ բացակայած պարզամավորների տասնյակներում ՀԱԿ ներկայացուցիչներ չկան: Ամենաշատը դեմ քվեարկած 10 պարզամավորներից 6-ը ՀԱԿ-ից են: Ամենակարիվ՝ հարց տրված ու ելույթ ունեցած պարզամավորների տասնյակում կա ՀԱԿ-ի 2 պարզամավոր:


ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պատգամավորներ» բաժնի) էջերի փասնյակում ՀԱԿ-ից միայն Հրանտ Բագրատյանինն է: Նա գլխավորում է փասնյակը:

«Օրինաց երկիր» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվել և ընդունվել է ՕԵԿ-ի հեղինակած միայն 1 նախագիծ, որը նստաշրջանի օրակարգում էր 2011 թվականից: ՕԵԿ-ն ունի շրջանառության մեջ դրած, սակայն նստաշրջանի օրակարգ չընդգրկված 19 օրենսդրական նախաձեռնություն, որոնցից 6-ը հեղինակել է 2013 թվականին:

3-րդ նստաշրջանից հաջորդ` 4-րդ նստաշրջանի օրակարգ է տեղափոխվել ՕԵԿ-ի հեղինակած 1 օրենսդրական նախաձեռնություն, ևս 4 նախագծի ՕԵԿ-ը միացել է որպես համահեղինակ:



Ըստ parliamentmonotoring.am կայքի վիճակագրության` 3-րդ նստաշրջանի ընթացքում

ՕԵԿ խմբակցության ամենաշատ հարց տված, ելույթ ունեցած և կողմ քվեարկած պատգամավորը Սիեր Շահգելոյանն է. կողմ` 192, հարց` 22, ելույթ` 14: Ամենաշատը բացակայել է Խաչիկ Հարությունյանը` 28: 3 ՕԵԿ-ական ընդամենը 1 անգամ քվեարկել է ձեռնպահ, ամենաշատը` 17 անգամ, չի քվեարկել Հեղինե Բիշարյանը:

Խորհրդարանի ամենաշատ բացակայած, դեմ ու ձեռնպահ քվեարկած պատգամավորների փասնյակներում ՕԵԿ ներկայացուցիչ չկա: Ամենաշատ կողմ քվեարկածների փասնյակում միակ ՕԵԿ-ականը Սիեր Շահգելոյանն է: Ամենակարգի պատգամավորների փասնյակում կա ՕԵԿ 2 անգամ:


Ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պատգամավորներ» բաժնի) էջերի փասնյակում ՕԵԿ խմբակցության ոչ մի պատգամավորի էջ չկա:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցություն

Ազգային ժողովի 5-րդ գումարման 3-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է ՀՅԴ-ի հեղինակած 2 նախագիծ, որոնք չորսօրյա նիստերի օրակարգում էին 2012թ.-ից: ՀՅԴ-ն ունի շրջանառության մեջ դրված, բայց օրակարգ չընդգրկված 6 նախագիծ, որոնցից 2 -ը հեղինակել է 2013 թվականին:

ՀՅԴ-ն ունի 3-րդից 4-րդ նստաշրջանի օրակարգ տեղափոխված 2 օրենսդրական նախաձեռնություն, 1-ը՝ առաջին ընթերցում անցած: Դրանց ընդգրկումը չորսօրյա նիստերի օրակարգ հետաձգվել է մինչև 1 տարով:



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում

ՀՅԴ խմբակցության ամենաշատ հարց տրված, ելույթ ունեցած, կողմ, դեմ, ձեռնպահ քվեարկած պարզամավորը Արծվիկ Մինասյանն է. հարց՝ 39, ելույթ՝ 30, կողմ՝ 41, դեմ՝ 38, ձեռնպահ՝ 103: Ամենաշատը բացակայել է Վահան Հովհաննիսյանը՝ 92, չի քվեարկել Աղվան Վարդանյանը՝ 73:


Խորհրդարանի ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների փասնյակում ՀՅԴ ոչ մի պարզամավոր չկա: Ձեռնպահ քվեարկածների փասնյակում դաշնակցական են 5-ը: Ամենաշատ բացակայածների փասնյակում ՀՅԴ-ից կա 1 պարզամավոր: Ամենաշատ դեմ քվեարկած և ամենակարիվ պարզամավորների փասնյակներում կա խմբակցության միայն 1 պարզամավոր: Ամենաշատ այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) էջերի փասնյակում ՀՅԴ-ից միայն Արծվիկ Մինասյանինն է:

ԱԺ ԽԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ժառանգություն» խմբակցություն

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգություն» խմբակցության որևէ օրենսդրական նախաձեռնություն չի ընդունվել: Խմբակցության կողմից արտահերթ համարվելու ճանապարհով քննարկվել է միայն մեկ նախագիծ, որով փոփոխություններ էին առաջարկվում Ընտրական օրենսգրքում: Պարզամավորների քվեարկությամբ նախագիծը չի ընդունվել: Դարձյալ քվեարկությամբ նստաշրջանի օրակարգ չի ընդգրկվել Թեղուտի խնդրի ուսումնասիրության նպատակով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին նախաձեռնությունը:

«Ժառանգություն» ունի շրջանառության մեջ դրված 4 օրենսդրական նախաձեռնություն, որոնց ընդգրկումը նստաշրջանի օրակարգ հեղաձգվել է մինչև 1 տարով:



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 3-րդ նստաշրջանի ընթացքում

«Ժառանգություն» խմբակցության պարզամավորներից ամենաշատը հարց է տվել Զարուհի Փոստանջյանը՝ 10: Ամենաշատը ելույթ ունեցել են Ռուբեն Հակոբյանն ու Զարուհի Փոստանջյանը՝ 8-ական: Նրանք նաև խմբակցության ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորներն են՝ 87: Ամենաշատը չի քվեարկել Ռուբեն Հակոբյանը՝ 30 անգամ, ձեռնպահ է քվեարկել Ալեքսանդր Արզումանյանը՝ 61, դեմ՝ Թևան Պողոսյանը՝ 47: «Ժառանգության» ամենաշատ բացակայած պարզամավորը Զարուհի Փոստանջյանն է՝ 72: Խորհրդարանի ամենաշատ բացակայած, կողմ քվեարկած, հարց տված ու ելույթ ունեցած պարզամավորների փասնյակներում «Ժառանգության» ոչ մի անդամ չկա: Դեմ քվեարկածների փասնյակում «Ժառանգության» ներկայացուցիչները 3-ն են, ձեռնպահների փասնյակում՝ 1-ը:

Ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) էջերի փասնյակում «Ժառանգության» խմբակցության ոչ մի պարզամավորի էջ չկա:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

5-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանի օրակարգը աննախադեպ հագեցած էր խորհրդարանի վերահսկողական գործառույթի շրջանակի հարյերով 4 ծրագիր, 3 հաշվետվություն, 2 զեկույց և 1 հաղորդագրություն: Այս փաստաթղթերի կեսից ավելին խորհրդարանում արժանացել է տրակական և բուռն քննարկման: Փաստացի՝ 3-րդ նստաշրջանի լիագումար նիստերի ժամանակի, մոտավոր հաշվարկով, գրեթե կեսը հատկացվել է ծրագրեր-հաշվետվություններ-հաղորդումներ լսել-հավանության արժանացնել-հաստատել-ի գիտություն ընդունելուն և մյուս կեսը՝ 95 օրենքների ընդունմանը, որոնց մեծ մասը մեկից ավելի ընթերցումներ է անցել:

Այս համադրության համապետստում ավելի հրապապ է հնչում այն հարցը, թե ինչպիսի իրավական ֆոն ու մեխանիզմներ են ստեղծված խորհրդարանի վերահսկողական գործառույթի արդյունավետ իրականացման համար: Իսկ պարասխանն անփոփոխ է՝ առայժմ Ազգային ժողովի վերահսկողությունն ունի առավելապես ֆորմալ բնույթ, քանի որ մեծ մասամբ հաշվետվություն-հաղորդումների ներկայացման ընթացակարգերը խորհրդարանի համար նախատեսում են սոսկ «ի գիտություն ընդունելու» իրավասություն:

Մյուս՝ առավել սակավ դեպքերում, երբ Ազգային ժողովն օժտված է վերահսկողական լուրջ լծակներով (կառավարության ծրագրի, բյուջեի կարարողականի հաստատում...), խորհրդարանի քաղաքական մեծամասնությունն իր վարքագծով է չեզոքացնում այդ հնարավորությունը՝ մշտապես և անվերապահ վստահություն դրսևորելով գործադիրի հանդեպ:

3-րդ նստաշրջանի ընթացքում առիթ եղավ նաև արձանագրելու խորհրդարանի անփույթ վերաբերմունքը կառավարության կողմից ներկայացված հարցերի խճճված հաջորդականության նկատմամբ. ԱԺ-ն նախ հավանության արժանացրեց կառավարության ծրագիրը, հետո քննարկեց նախորդ տարվա բյուջեի կարարողականը, ապա խիստ զարմացավ բյուջեփային միջոցների անարդյունավետ ծախսերի մասին Վերահսկիչ պալատի հաշվետվությամբ հրապարակված փաստերից:

ԱԺ վերահսկողական գործառույթի շրջանակում առանձնացված հարցերը ներկայացնենք ըստ խորհրդարանում դրանց քննարկման ժամանակագրության:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԿԸՀ հաղորդագրությունը

ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ համապետական ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո՝ 3 ամսվա ընթացքում, կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին ընտրությունների կազմակերպման և անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության, առաջարկվող օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հաղորդագրությամբ հանդես է գալիս Ազգային ժողովում:

2012 թվականի ԱԺ ընտրությունների մասին հաղորդագրությունը խորհրդարանին ներկայացվեց 2013-ի մարտին՝ ժամանակացույցի զգալի խախտումով: Այս հանգամանքը կարևորվեց հարկապես այն պատճառով, որ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ հաղորդագրությունը ներկայացվում էր մեկ այլ համապետական՝ ՀՀ նախագահի ընտրություններից հետո: Ավելին՝ ԱԺ կանոնակարգն ընդհանրապես չի նախատեսում ԿԸՀ հաղորդագրության քննարկում, ինչին հակված էր խորհրդարանում քաղաքական փոքրամասնությունը: Վարման կարգի շրջանակներում ընդդիմությունը փորձում էր ապացույցել, որ այս հաղորդագրությունը պետք է քննարկվի Կանոնակարգի 55-րդ հոդվածի համաձայն՝ ներկայացմանն ու հարցուպատասխանին հետևեն ելույթները, մեծամասնությունը պնդում էր, որ հաղորդագրությունը պետք է ավարտվի հարցուպատասխանով:

ԿԸՀ նախագահին ընթերցեց հաղորդագրությունը, որով բավարար ու որոշ չափորոշիչներով էլ բարձր էին գնահատվում խորհրդարանական ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը, ընտրական օրենսդրությունը բարելավելու մի շարք առաջարկներ արեց, որոնց թվում էր նաև ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը դրոշմակնքելու ինստիտուտից հրաժարվելու մասին առաջարկը:

Մեծամասնությունն առայժմ հանդես չի եկել ԿԸՀ նախագահի առաջարկություններին համահունչ օրենսդրական նախաձեռնություններով:

ՄԻՊ զեկույցները

Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանվում է, որ յուրաքանչյուր փարի ԱԺ գարնանային նստաշրջանի ընթացքում Պաշտպանը ՀՀ խորհրդարանի լիազուսմար նիստում հանդես է գալիս նախորդ փարվա ընթացքում իր գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույցով:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻ պաշտպանն առաջին անգամ խորհրդարանին ներկայացավ միանգամից երկու՝ 2011 եւ 2012 թ.թ. զեկույցներով, որոնք կազմվել էին նոր ձևաչափով ու փորձամաքանությամբ. եթե նախորդ Պաշտպանի զեկույցներում ներկայացվում էր մարդու իրավունքների վիճակն ըստ իրավունքների, ապա այս դեպքում դրանք ներկայացված էին ըստ գերատեսչությունների:

Տեղեկանք. Ըստ ՄԻՊ զեկույցների՝ 2011-2012թթ. ընթացքում ուսումնասիրվել են համապատասխանաբար 26 և 22 գերատեսչությունների գործունեությունն ու առնչությունը իրավունքների պաշտպանությանը: 2011-ին արձանագրվել է 145 համակարգային խնդիր, որոնցից 70-ը արդեն հաջորդ փարի լուծվել են, իսկ մնացածները տեղ են գտել 2012-ի զեկույցում, որում արձանագրված է 148 համակարգային խնդիր: Ի փարբերություն 2011-ի՝ 2012-ի զեկույցում չի ներկայացված ԱԱԾ-ի, ԿԸՀ-ի, ՀՌԱՀ-ի գործունեությունը:

Խորհրդարանն, ընդհանուր առմամբ, համամիտ չէր զեկույցի համար ընտրված մոտեցումների հետ՝ կարծելով, որ նման կառուցվածքում փուժում է մարդու իրավունքների թիրախայնությունը: Հնչած քննադատության արդյունքում ԱԺ-ն ու ՄԻ պաշտպանը համաձայնության եկան հաջորդ փարվա զեկույցում ներառել նաև խախտումները՝ ըստ իրավունքների:

Զեկույցներն ընդունվեցին ի գիտություն, իսկ դրանցում բարձրացված հարցերն ու արձանագրված փաստերն առայժմ մնում են անարձագանք:

Կառավարության ծրագիրը

Կառավարությունն իր կազմավորումից հետո՝ քսանօրյա ժամկետում, Ազգային ժողով է ներկայացնում իր ծրագիրը: Կառավարության ծրագրին Ազգային ժողովի կողմից հավանություն տալու հարցը քննարկվում է արտահերթ եւ քվեարկության դրվում այն ներկայացվելուց հետո՝ հնգօրյա ժամկետում: Կառավարության ծրագրին հավանություն տալու մասին որոշումն ընդունվում է Ազգային ժողովի պարզամամուրների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 24

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 20-23-ի քառօրյա նիստերի ընթացքում կառավարությունը ԱԺ ներկայացրեց իր ծրագիրը: Սա, փաստորեն, 2008-ին ձևավորված և հիմնականում կազմը պահպանած կառավարության թվով 3-րդ ծրագրի ներկայացումն էր հիմնական կազմը 2007-ից պահպանած խորհրդարանին: Միաժամանակ, ի կատարումն սահմանադրական պահանջի, կառավարությունը ստիպված էր 2 անգամ ծրագիր ներկայացնել վերջին մեկ տարվա ընթացքում՝ 2012-ի խորհրդարանական և 2013-ի նախագահական ընտրություններից հետո:

Այս իրողությունը ներկայացվելիք ծրագիրը կանխավ զրկում էր ինտրիգից և կանխորոշում քվեարկության արդյունքների համամասնությունը: Գրեթե ամբողջությամբ պահպանված էին ծրագրի բովանդակությունն ու ոճը, թիրախներն ու նպատակները:

«Կառավարության 2012 և 2013թթ. ծրագրերի գաղափարախոսական հենքը նույնն է: Ակնկալվում է, որ առաջիկա 5 տարիներին տարեկան ունենալու ենք 5-7% ՀՆԱ-ի աճ: Տարբեր փորձագիտական գնահատականներով Հայաստանի ՀՆԱ-ի ներուժը գտնվում է հենց այս միջակայքում, այսինքն՝ ծրագիրը հիմնված է ոչ թե բարձր, այլ միջին տեմպերով աճ ապահովելու գաղափարի վրա: Փորձագիտական վերլուծությունից (վերլուծությունն ամբողջությամբ հավելվածում):»

Դիտարկում. 60 էջանոց ծրագիրը առավելապես հռչակագրային է՝ ներառելով հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները եւ հռչակագրերին հատուկ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են՝ իրականացնելը՝ (27 անգամ), ամրապնդ(ում)ելը (19 անգամ), նպաստել(ում)ը (17 անգամ), կրճատ(ում)ելը՝ 16 անգամ), ընդլայն(ում)ելը՝ (15 անգամ), խթան(ում)ելը՝ 8 անգամ եւ այլն: Միայն ծրագրի 2-րդ գլուխն է պարունակում թվային որոշ տվյալներ և փաստաթղթին փոքր-ինչ կոնկրետություն հաղորդում.

Տեղեկանք. Կառավարությունը խոստանում է համախառն ներքին արդյունքի 5-7 տոկոս աճ, նվազագույն աշխատավարձի մակարդակի առնվազն կրկնապատկում. ծնելիության գումարային գործակցի աճ մինչև 1.8-ի, 5-6 տարեկան երեխաների առնվազն 90 տոկոսի համար նախադպրոցական կրթության հասանելիության ապահովում. միջին աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակի մակարդակի բարձրացում հասցնելով աղքատության գծի համեմատ առնվազն 125 տոկոսի. աղքատության կրճատման ապահովում 8-10 տոկոսային կետով. 100 հազարից ավելի նոր աշխատատեղերի ստեղծում. պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովում համախառն ներքին արդյունքի նկատմամբ տարեկան 0.3 - 0.4 տոկոսային կետի չափով:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վարչապետը հայտարարեց, թե կառավարության ծրագիրը կազմելիս հիմք են ընդունվել ՀՀ նախագահի, ՀՀԿ և ՕԵԿ նախընտրական ծրագրերը, և որ կառավարության համար առաջնահերթ խնդիր է լինելու աղքատության եւ գործազրկության կրճատումը, արտագաղթը, ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը: Ընդդիմությունը քննադատեց ծրագրի անորոշությունը, հավակնության բացակայությունը և միաժամանակ իրատեսականությունը՝ պնդելով, թե նույնիսկ սահմանված խիստ համեստ նպատակներին հասնելու համար կառավարությունը չունի կամ չի մատնանշել պարկերայումներ կոնկրետ քայլերի մասին: Քաղաքական մեծամասնությունն ընդդիմության քննադատությանն արձագանքեց հախուռն, հիմնականում ոչ առարկայական և անձնավորված:

Այսպիսով՝ նոր ձևավորված և փաստացի ոչ նոր կառավարության ներկայացրած ձևականորեն նոր, իսկ իրականում ոչ այնքան նոր ծրագրի խորհրդարանական բուռն ու տրևական քննարկումները կրկին բավարար հանրային պարկերայումներ չձևավորեցին առաջիկա տարիներին ԱԺ քաղաքական մեծամասնության աջակցությամբ կառավարության գործունեության հիմնական ուղղությունների ու արդյունքների վերաբերյալ:

Բյուջե 2012-ի կադրողականը

Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կադրման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից եւ միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների եւ վարկերի օգտագործման նկատմամբ:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 77

Բյուջեի կադրողականն ԱԺ քննարկմանը ներկայացվող այն փաստաթղթերից է, որի առնչությամբ խորհրդարանն իրավասու է կառավարությանն անվստահություն հայտնելու հարց բարձրացնել: ԱԺ կանոնակարգ օրենքը սահմանում է, որ բյուջեի հաշվետվության համար նախատեսված ընթացակարգի ավարտին վարչապետը կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարը կարող է առաջարկել քվեարկության դնել բյուջեի կադրման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ԱԺ որոշման նախագիծը կամ բյուջեի կադրման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու առնչությամբ դնել կառավարության վստահության հարցը:

ՀՀ 2012թ. պետական բյուջեի կադրման տարեկան հաշվետվությունը խորհրդարանը քննարկեց և հաստատեց հունիսի 10-13 քառօրյա ընթացքում: Որոշումն ընդունվեց ձայների 66 կողմ, 36 դեմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ: Կողմ քվեարկեցին միայն կոալիցիոն կուսակցությունները:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկանք. 2012թ. պեղծությունը ծրագրվել էր ստանալ 944.9 մլրդ դրամ եկամուտ, փաստացի եկամուտները կազմել են շուրջ 946.2 մլրդ դրամ: Նախորդ տարվա ցուցանիշը գերազանցվել է 7.4%-ով: Ծրագրային ցուցանիշը կատարվել է 100.14%-ով: Պեղծության ծախսերը ծրագրվել էին շուրջ 1,077.2 մլրդ դրամ, փաստացի ծախսերը կազմել են 1,006.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 93.4% կատարողական:

Ըստ կառավարության՝ ծախսերի թերակատարումը պայմանավորված է «որոշ ծրագրերով նախատեսված միջոցների փոփոխմամբ, ինչպես նաև առանձին ծրագրերի շրջանակներում գնումների հետ կապված վճարումների հետաձգմամբ: Շեղումը մասամբ պայմանավորված է արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականով (60.6%)»:

2012 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 2%-ով: ՀՀ 2012 թվականի պետական բյուջեն կատարվել է 59.9 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրով նախատեսված 132.2 մլրդ դրամի 45.3%-ը: Շեղումը, կառավարության հիմնավորումներով, պայմանավորված է ծախսերի կատարողականով:

Բյուջեի կատարողականի քննարկումը չչեղվեց գործադիր կողմից ներկայացվող փոփոխական փաստաթղթերի քննարկման փորձաքննությունից. ԱԺ ոչ կոալիցիոն 4 խմբակցությունները քննադատեցին այն՝ փաստաթուղթը պաշտպանելու բեռը թողնելով միայն ՀՀԿ-ին և ՕԵԿ-ին: Քննադատության թիրախը ոչ այնքան կատարողականի ցուցանիշներն էին, որքան երկրի սոցիալ-փոփոխական վիճակի ու ներկայացվող ցուցանիշների անհամադրելիությունը, վարվող փոփոխական քաղաքականությունն ընդհանրապես:

Վերահսկիչ պալատի հաշվետվությունը

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջեային միջոցների եւ պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Վերահսկիչ պալատի գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը:

Վերահսկիչ պալատը տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.4

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի 101-րդ հոդվածի՝ Վերահսկիչ պալատի փարեկան հաշվետվությունը խորհրդարանի քննարկմանն է ներկայացվում բյուջետային փարվա ավարտից հետո ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում և քննարկվում է մինչև փյալ հերթական նստաշրջանի ավարտը: Պարզամավորներն այն քննարկում են՝ առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:

ՎՊ 2012 թ.-ի հաշվետվությունը խորհրդարանը քննարկեց գարնանային նստաշրջանի վերջին քառօրյա վերջին օրը՝ հունիսի 13-ին: Քննարկումը շարունակվեց նաև հունիսի 17-ին մեկնարկած արտահերթ նստաշրջանի ընթացքում:

ՎՊ հաշվետվության քննարկումը, թերևս, ամենաբուռն ու խնդրահարույցն էր գարնանային ողջ նստաշրջանի ընթացքում: Հաշվետվության արդյունքները կոշտ քննադատության առիթ դարձան ոչ միայն ընդդիմադիրների, այլ նաև քաղաքական մեծամասնության համար:

Իրականացրած սրուգումների ու վերահսկողության արդյունքում Վերահսկիչ պալատը ինչպես նախորդ փարիներին, այնպես էլ 2012-ին, բյուջետային միջոցների անարդյունավետ ծախսման, խախտումների ու թերացումների բազմաթիվ դեպքեր է արձանագրում, նշում է, որ խախտումներն ընդհանրական են և համակարգային բնույթ ունեն: Կոռուպցիայի տեսանկյունից ամենառիսկայինը Վերահսկիչը շարունակում է համարել շինարարության ու գնումների ոլորտները:

Բյուջեին հասցված վնասի դրամային ընդհանուր արժեքը, ի տարբերություն նախորդ փարիների, ԱԺ ամբիոնից չհրապարակվեց: ՎՊ նախագահը նշեց միայն, որ բյուջեից շինարարության և գնումների ոլորտ է ուղղվում մոտ 701 մլրդ դրամ:

Հաշվետվությունից. Շինարարության ոլորտում տարածված են չկատարած աշխատանքների դիմաց վճարումները, գների արհեստական թանկացումները, նախատեսված բարձրորակ նյութերի և ապրանքների փոխարեն դրանց ցածրորակ տեսակների օգտագործումը, տեխնիկական թերի հսկողության իրականացումը: Գնումների ոլորտում վերահսկողությամբ դեռևս բացահայտվում են հակամրցակցային, անարդյունավետ, ոչ թափանցիկ, ոչ հրապարակային և խտրական հիմքերով կազմակերպված գնման գործընթացներ:

Վերահսկիչ պալատը արձանագրած բազմաթիվ խախտումներից միայն մեկով է նյութերն ուղարկել դատախազություն. ՀՀ Արդարադատության նախարարության «Դատաիրավական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի վերաբերյալ նյութերի հիմքով հարուստ է քրեական գործ:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԱԺ վերահսկողական գործառույթը. վայրիվերումներ և անորոշություն (փորձագիտական վերլուծություն)

Գոռ Աբրահամյան

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ, գարնանային նստաշրջանը խորհրդարանի վերահսկողական գործառույթի իրացման տեսանկյունից առանձնանում էր նրանով, որ խորհրդարանն անդրադարձավ մի շարք պետական մարմինների կողմից ԱԺ ներկայացվող տարեկան հաշվետվություններին և գործունեության ծրագրերին: Բացառությամբ նախորդ տարվա պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության, մյուս բոլոր դեպքերում խորհրդարանը կաշկանդված էր դրանք բացառապես ի գիտություն ընդունելու սահմանափակ լիազորությամբ, որը նվազագույնի է հասցնում ԱԺ-ի վերահսկողական ֆունկցիայի իրացման արդյունավետությունը, քանի որ խորհրդարանին զրկում է գործադիր ու դատական իշխանության մարմինների գործունեության վրա ազդելու, իրավաքաղաքական դիրքորոշում ամրագրելու հնարավորությունից:

Թերևս այդ գործառույթը թերաբժնորելու իրողությամբ է պայմանավորված հաշվետվությունները ընթացակարգային խախտումներով, այսինքն ժամկետանց քննարկելու պրակտիկայի շարունակումը, որն այս նստաշրջանում ծայրահեղ դրսևորումներ ունեցավ: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի 2011 և 2012թթ. զեկույցները խորհրդարանը քննարկեց միաժամանակ: Չնայած դա մարդու իրավունքների ու ազատությունների ընդհանուր վիճակը երկու տարիների կտրվածքով համեմատելու հնարավորություն տվեց, սակայն մեկ տարի ուշացումով 2011-ի զեկույցի քննարկումը զրկեց ժամանակին համարժեք հետևություններ անելու և 2012-ին ընդառաջ արձանագրված խախտումները չեզոքացնելու հնարավորությունից: Խորհրդարանը 2013-ի մայիսին ի գիտություն ընդունեց ոչ միայն ԿԲ-ի 2012-ի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվությունը, այլ նաև ինքնին ծրագիրը: Փաստորեն այն ընդունվեց դրա կատարման հաշվետվությանը զուգընթաց այն դեպքում, երբ խորհրդարանի օրակարգում էր դեռևս 2012թ. ապրիլից: Փաստացի ոչ այնքան ընթացակարգային, որքան հաջորդականության տրամաբանական խախտումներով ընդունվեցին նաև 2012թ. պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը և Վերահսկիչ պալատի՝ 2012թ. գործունեության հաշվետվությունը: Տրամաբանորեն խորհրդարանը նախ պետք է քննարկեր բյուջեային միջոցների ծախսման վերաբերյալ Վերահսկիչ պալատի հաշվետվությունը՝ ոչ թե այն պարձառով, որ այն ավելի վաղ էր ընդգրկվել ԱԺ-ի օրակարգ, այլ որովհետև պետական միջոցների ծախսման արդյունավետության գնահատման ֆոնին հնարավորություն էր լինելու համադրել դրանք կառավարության ներկայացրած պատկերի հետ: Սակայն այն քննարկման դրվեց 2012թ. բյուջեի կատարողականից հետո, իսկ քաղաքական

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

մեծամասնությունն ամեն կերպ անտեսեց բյուջեի կապարողականի շրջանակում պարզամավորների տրամադրության տակ արդեն գտնվող ՎՊ-ի հաշվետվության մբ հայտնաբերված խախտումներն ու յուրացումները ոչ ֆորմալ ձևով քննարկելու խորհրդարանական փոքրամասնության փորձերը: Սրան զուգընթաց, պառլամենտի կողմից վերահսկողական ֆունկցիայի գործադրումը նոր, որոշ դեպքերում հակասական դրսևորումներ ունեցավ այս նստաշրջանում, որոնք կարող են ավելի ուշ հանգեցնել առայժմ անորոշ հեռանկար խոստացող օրենսդրական վերանայումների:

Նախ` չնայած ինքնին 2012-ի բյուջեի կապարողականի հաշվետվության քննարկումը ոչնչով չէր տարբերվում նախորդ տարիների քննարկումներից, սակայն ԱԺ ղեկավարության կողմից այն ՎՊ-ի գործունեության հաշվետվութ-յունից առաջ քննարկման դնելը ցույց տվեց, որ խորհրդարանական մեծամասնության համար առաջնային էր նոր ձևավորված կառավարության համար անգամ նվազագույն խնդիրներ չհարուցելը, սուր հարցադրումներին պարասխանելու անհրաժեշտությունից նրան ձերբազատելը և հնարավոր լուրջ հասարակական ռեզոնանսներից խուսափելը:

Երկրորդ` ի տարբերություն նախորդ նստաշրջանների` գրեթե բոլոր հաշվետվությունների, ծրագրերի ներկայացումն ուղեկցվել է քննարկումներին քաղաքական մեծամասնության աննա-խաղեպ ակտիվ մասնակցությամբ: Թեև դա մեծ հաշվով թելադրված էր ընդդիմության քննադատությունն այդ ակտիվությամբ «խեղդելու» մարտավարությամբ, սակայն բոլոր դեպքերում բանավիճային մթնոլորտ և մշակույթ ձևավորելու միտումներ է պարունակում:

Երրորդ` Մարդու իրավունքների պաշտպանի 2011 և 2012թթ. զեկույցները շահեկանորեն տարբերվում էին նախորդներից համակողմանիությամբ: Դրանք ընդգրկում էին ոչ միայն քաղաքացիական ազատությունների, ընտրական իրավունքի և իրավապահ ու արդարադատության համակարգերի հետ շփումներում քաղաքացիների իրավահարաբերությունների դաշտը, ինչի հենքի վրա կառուցվել են նախկին զեկույցները, այլև սոցիալական, քաղաքական, տնտեսական ոլորտներում, մատուցվող պետական ծառայութ-յունների շրջանակում քաղաքացիա-կան իրավունքների դիտարկումը:

Ընտրվել էր ըստ պետական մարմինների ուսումնասիրություններ անցկացնելու մեթոդաբանությունը, ինչն ավելի էր ոյուրինացնում արձանագրված խախտումների հասցեականությունը և պարասխանատուների շրջանակի հստակեցումը: Թերևս դա էր պարճառը, որ այն ենթարկվեց բավականին բուռն քննարկման և լուրջ քաղաքական աջակցություն ստացավ խորհրդարանական ընդդիմության կողմից: Թեև այն ուղղակի և անուղղակի առաջարկություններ էր պարունակում արձանագրված խնդիրներից շատերը օրենսդրական փոփոխությունների ձանապարհով լուծելու համար, սակայն մարդու

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

իրավունքների հիմնահարցի նկատմամբ քաղաքական մեծամասնության նկատելի զուսպ վերաբերմունքը, շահագրգռության բացակայությունը, մյուս կողմից էլ խորհրդարանական ընդդիմության ռեսուրսների անբավարարությունը չեն դրդում օրենսդրական փոփոխությունների օրակարգի ձևավորմանը:

Հետևաբար, զեկույցները հիմնականում մնում են անհետևանք և խորհրդարանի անփարբերության պարագայում արժանանում գործադիր իշխանության մարմինների հակազդեցությանը:

Չորրորդ` Վերահսկիչ պալատի 2012թ գործունեության հաշվետվությունը, դրա քննարկումները խորհրդարանում և հարկապես դրան հաջորդած զարգացումները խորացված կերպով դրսևորեցին թե ԱԺ-ի, իբրև իշխանության ինքնուրույն ճյուղի, վերահսկողական գործառույթի իրական պոպոնդիալը, թե դրանից հանրային ու քաղաքական սպասումները: Բովանդակային իմաստով այս հաշվետվությունը շատ քիչ էր փարբերվում ՎՊ նախորդ փարիների նմանատիպ փաստաթղթերից, որոնք ԱԺ-ում ի գիտություն ընդունվելուց հետո անտեսվում էին` չնայած դրանցում բյուջեփային միջոցների յուրացումների, կոռուպցիոն դրսևորումների մասին վկայող փաստերի առկայությանն ու առաջադրությանը: Սակայն ՎՊ վերջին հաշվետվությունը չափազանց բուռն քննարկումների և կառավարության հասցեին սուր քննադատությունների տեղիք տվեց, որում առանձնակի ակտիվություն ու շահագրգռություն էր հանդես բերում հարկապես խորհրդարանական մեծամասնությունը:

Այդ ակտիվությունն անբնական էր առաջին հերթին այն պարճառով, որ բնույթով ոչ թե գործադիր իշխանությանը սափարող էր կամ չեզոք, այլ ընդգծված քննադատական, որը չէր տեղավորվում մինչ այդ նմանատիպ հաշվետվությունների, օրենսդրական նախաձեռնությունների ժամանակ դրսևորվող վարքագծի շրջանակում: Մանավանդ որ ընդամենն օրեր առաջ էր ԱԺ մեծամասնությունն այդ աջակցությամբ առանց որևէ խնդրի ընդունել կառավարության 2012թ. բյուջեի կափարողականի հաշվետվությունը:

Բյուջեի ծախսային մասի մոտ 700 մլրդ դրամի ռիսկային լինելու վերաբերյալ ՎՊ նախագահի պնդումը կառավարությունն ընդունեց որպես այդ միջոցները փոշիացնելու, յուրացնելու մեղադրանք և ՎՊ-ին քննադատեց իրավասություններից դուրս գալու և քաղաքական հայտարարություններ ու գնահատականներ հնչեցնելու մեջ: ԱԺ-կառավարություն բանավեճը սահուն անցում կատարեց ՎՊ-կառավարություն դիմակայության, որին միջամտեց հանրապետության նախագահը` հրավիրելով խորհրդակցություն բյուջեփային միջոցների արդյունավետ կառավարման, իրականացվող պետական ծրագրերի հանդեպ վերահսկողության ուժեղացման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված հարցերի շուրջ:

ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ՎՊ հաշվեքվությունը և հատկապես դրա շուրջ ծավալված իրադարձությունները ի հայտ բերեցին միաժամանակ թե դրական և թե բացասական միտումներ: Նախ՝ փաստացի առաջին անգամ ԱԺ-ն հանդես բերեց բավարար ինքնուրույնություն՝ առաջնորդվելով ոչ թե քաղաքական իշխանության ամբողջականության, այլ իշխանության թևերի փարանջատման և հակակշռման սկզբունքով: Այս իմաստով բնորոշիչ էր ՎՊ հաշվեքվությունը Գլխավոր դատախազություն ուղարկելու ԱԺ նախագահի քայլը, որով նա խնդիրը քաղաքական փրոյթից փոխափոխեց իրավական հարթություն: Սակայն առանձին վերցրած մեկ հաշվեքվության նկատմամբ փարբերակված մոտեցման ցուցաբերումն առաջին պլան մղեց կասկածները՝ կապված փեղի ունեցածը մասնավոր կամ խմբակային շահերի բախման հետևանք լինելու, խորհրդարանական քննարկումները շահարկումների դաշտ դարձնելու հնարավորության հետ:

Մյուս կողմից՝ հանրապետության նախագահի հրավիրած խորհրդակ-ցությունից հետո ակնհայտ դարձավ, որ քաղաքական որոշում է կայացվել Վերահսկիչ պալատի մասին օրենսդրությունը փոփոխությունների ենթարկելու մասին: Ըստ էության, սա այն եզակի դեպքերից է, երբ ԱԺ-ի կողմից իր վերահսկողական լծակների գործադրումը հանգեցնում է նման հետևանքի: Սակայն խնդիրն այն է, թե ինչ բնույթ են ունենալու այդ փոփոխությունները. արդյո՞ք դրանք ուղղված են լինելու ՎՊ ուսումնասիրությունների, Պալատի հաշվեքվությունը խորհրդարանում Հանրապետության նախագահի կողմից ՎՊ նախագահի վարքագիծն ու հայտարարությունները, ինչպես նաև ԱԺ քաղաքական մեծամասնության վարքագիծը քննադատելը, կառավարության ժխտողական կեցվածքն այս առումով վավարեսական սպասելիքների փեղիք չեն տալիս: Եթե օրենսդրական փոփոխությունները սահմանափակող բնույթ կրեն, գործադիր իշխանությունից խորհրդարանի կախվածությունը կարող է դե ֆակտո-ից դառնալ դե յուրե, իսկ վերահսկողական գործառույթը կարող է վերջնականապես ձևականացվել: Այս իմաստով ՎՊ-ի հաշվեքվության շուրջ նստաշրջանի ընթացքում առաջացած հակասություններն ու քաղաքական պրոպեաները կարելի է բնորոշել որպես իշխանության երկու թևերի միջև հանգրվանային, դիրքային պայքարի դրսևորում:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5-րդ գումարման ԱԺ 3-րդ նստաշրջանի ընթացքում ընդունվել է 95 օրենք. 5-ը մայր օրենքներ են, մնացածը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 79-ի հեղինակը կառավարությունն է (դրանցից 10-ը կառավարությունն անհետաձգելի է համարել), 15-ինը՝ ԱԺ պարզամավորները, 1-ը՝ համապետ: Սուր 1/3-ը (31 օրենք) ընդունվել է արտահերթ նստաշրջանի ընթացքում: Դրանց գրեթե կեսի 2-րդ և 3-րդ ընթերցումները կազմակերպվել են 24-ժամյա ռեժիմով: 95 օրենքներից 21-ը խորհրդարանն ընդունել է հափուկ կարգով:

Ընդունված օրենքների մոտ կեսը՝ 42-ը, վերաբերում է սոցիալ-տնտեսական ոլորտին, 27-ը՝ պետաիրավականին, 8-ը՝ պաշտպանության և ներքին գործերին, 7-ը՝ կրթության ոլորտին, 6-ը՝ տարածքային կառավարմանն ու տեղական ինքնակառավարմանը, 2-ը՝ առողջապահությանը, 3-ը՝ մարդու իրավունքներին:

Ինչպես նշել ենք «ԱԺ վերահսկողությունը» բաժնում, 3-րդ նստաշրջանի ընթացքում խորհրդարանում ներկայացվել են 10 ծրագիր, հաշվետվություն և հաղորդում, որոնց քննարկմանը հատկացվել է նստաշրջանի ժամանակի գրեթե կեսը: Սա անդրադարձել է խորհրդարանի օրենսդրական գործունեության վրա: Ըստ parliamentmonitoring.am-ի վիճակագրության՝ օրենքների մոտ կեսը 3-րդ նստաշրջանում ընդունվել է առանց շահագրգիռ քննարկման (հարց ու ելույթներ չեն եղել): Մինչդեռ, օրինակ Վերահսկիչ պալատի հաշվետվության քննարկման ժամանակ հարցերի ու ելույթների առումով խորհրդարանում գրեթե ռեկորդային ցուցանիշ գրանցվել: Այն դեպքում, երբ ծրագրերի ու հաշվետվությունների քննարկմանը հաճախ հատկացվել է մի քանի նիստ, շատ օրենքներ քննարկվել և ընդունվել են ընդամենը մեկ նիստի ընթացքում:

Սրորև ներկայացնում ենք գարնանային նստաշրջանի ընթացքում ընդունված օրենքներից մի քանիսի դիտարկման արդյունքները: 3 փաթեթների միջոցով դիտարկել ենք պաշտպանության ու մարդու իրավունքների, բյուջեային համակարգի, բիզնես միջավայրի բարելավմանն ուղղված օրենսդրական քայլերը: Դիտարկվել է նաև այս խնդիրների արժարժումը քաղաքական ուժերի ծրագրերում, համադրվել են ծրագրային մոտեցումներն ու քվեարկությամբ արտահայտված դիրքորոշումները:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այլընտրանքային ծառայություն

2013 թ. մայիսի 2-ին ընդունվեց «Այլընտրանքային ծառայության մասին» և «ՀՀ քրեական օրենսգիրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքներում լրացումներ ու փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը՝ ձայների 65 կողմ, 2 դեմ, 26 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ են քվեարկել կոալիցիոն խմբակցությունները, ՀԱԿ և «Ժառանգություն» խմբակցությունների՝ դաիլիժում ներկա պարզամավորները: ԲՀԿ-ն ձեռնպահ է քվեարկել, ՀՅԴ-ն չի մասնակցել քվեարկությանը: Դեմ են քվեարկել մեկական պարզամավոր ՀՀԿ-ից և «Ժառանգությունից»:

Փոփոխությունների հիմնավորումները. Օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը կառավարությունը հիմնավորում էր Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորություններով: «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքն ընդունվել է 2003թ., սակայն փաստացի չի գործել: Պարզառը օրենսդրական որոշ դրույթներն էին, որոնք հակասում էին այլընտրանքային ծառայության եվրոպական պահանջներին: Դրա հետևանքով կրոնական համոզմունքների պարզառովային զինվորական ու աշխատանքային ծառայություններից հրաժարված քաղաքացիների նկատմամբ հարուցված քրեական գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմաթիվ որոշումներ է ընդունել ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

Տեղեկանք: 2012 թ. ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամների գանգաբանների վերաբերյալ մի քանի վճիռներ է կայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության: «Բուխարայանն ընդդեմ Հայաստանի» և «Ծափուրյանն ընդդեմ Հայաստանի» գործերով կայացված վճիռների համաձայն՝ Հայաստանը պարտավոր է նրանցից յուրաքանչյուրին վճարել 10.000-ական եվրո: Հիշյալ անձինք դատապարտվել էին ազատագրկման ժամկետային զինվորական ծառայությունից հրաժարվելու համար: Այդ գործերով ՄԻԵԴ-ը ճանաչել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի խախտում (մտքի, խղճի և կրոնի ազատություն): 2012 թ. նոյեմբերի 27-ին «Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավարարել է Եհովայի վկաների 17 դիմում: Հիշյալ վճռի համաձայն՝ Հայաստանը նրանց պետք է վճարի 6000-ական եվրո, ինչպես նաև ընդհանուր դատական ծախսերի համար՝ 10.000 եվրո, ընդհանուր առմամբ՝ 112.000 եվրո:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փոփոխությունների բովանդակությունը. Կատարված փոփոխություններով այլընտրանքային զինվորական ծառայությունը եւ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը փարանջարվում են ` հիմք ընդունելով հանգամանքը, թե անձի համոզմունքները դեմ են ընդհանրապես զինվորական ծառայություն իրականացնելուն, թե՞ ընդամենը զենք կրելուն կամ օգտագործելուն: Ծառայության տեսակը որոշելու խնդիրը դրվում է այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի վրա: Եթե նախկինում այս կառույցը ձևավորվում էր զինվորականներից, ինչը օրենքի ամենախնդրահարույց կետերից մեկն էր, ապա փոփոխությունների արդյունքում հանձնաժողովը կազմվելու է փարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, ոստիկանության եւ պաշտպանության, ոլորտները կարգավորող պետական կառավարման մարմինների և ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման ներկայացուցիչներից: Հանձնաժողովի կողմից դիմումներն ընդունելու, քննարկելու, դրանց մասին որոշումներ կայացնելու և բողոքարկելու ընթացակարգերի հաստատումը դրվում է կառավարության վրա:

Կրճարվում են այլընտրանքային ծառայության ժամկետները: Այլընտրանքային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 30 ամիս` նախկին 36-ի փոխարեն, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը 36 ամիս, նախկին` 42-ի փոխարեն:

Այն անձինք, ովքեր պարտադիր զինվորական ծառայությունից խուսափել են կրոնական համոզմունքների կամ հայացքների պատճառով և ազատագրված են ենթարկվել այլընտրանքային ծառայություն ունենալու պարտավորությունն ստանձնելու պահից մինչև «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ գործող օրենքի ընդունումը, և նրանք, ովքեր նույն պատճառներով քրեական պատասխանատվության են ենթարկվել օրենքի ընդունումից հետո, ճանաչվում են դատվածություն չունեցող: Իսկ նրանք, ովքեր նույն հիմքերով պատիժ են կրում ներկայումս, հնարավորություն են ստանում անցնելու այլընտրանքային ծառայության, որի տեսակը որոշելու է վերոնշյալ հանձնաժողովը:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Այլընտրանքային ծառայություն. նախընտրական ծրագրերի լուծումը

Փաթեթի քննարկումները ԱԺ լիազումար նիստում անցան անսովոր մթնոլորտում. խորհրդարանն այս փաթեթն ընդունեց՝ փաստացի դրան դեմ լինելով:

Չնայած հեղինակը քաղաքական մեծամասնության վստահությունը վայելող կառավարությունն էր, սակայն խորհրդարանում փաթեթը հանդիպեց հենց խորհրդարանական մեծամասնության դիմադրությանը: Ընդդիմությունը՝ ի դեմս ՀԱԿ, ՀՅԴ, և «Ժառանգություն» խմբակցությունների, ինչպես նաև իրեն այլընտրանք հռչակած ԲՀԿ խմբակցությունը, այս փաթեթի քննարկումներին գրեթե չմասնակցեցին՝ չնայած այն ուղղակիորեն առնչվում էր միանգամից երկու առանցքային ոլորտների՝ ազգային անվտանգությանը, երկրի պաշտպանունակությանը և մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների հարգմանը: Մեծամասնությունը քննարկման և քվեարկության փուլերում հակասականություն դրսևորեց՝ ցույց տալով, որ չնայած դեմ է, նման փոփոխությունները հակասում են իր աշխարհայացքային ընկալումներին, սակայն դրանից խուսափելու հնարավորություն չունի, և պարտավոր է ստանձնել դրա քաղաքական պատասխանատվությունը:

Խորհրդարանական ուժերի ծրագրերում այլընտրանքային ծառայության խնդիրն արծարծված չէ ոչ պաշտպանության ու զինված ուժերի, և ոչ էլ մարդու խղճի, դավանանքի ու համոզմունքների ազատության իրավունքի կտրվածքներով: Եթե բանակին առնչվող հիմնախնդիրները ծրագրերում քիչ թե շատ համակարգված բնույթ ունեն, ապա մարդու, հարկապես քաղաքացիական իրավունքների մասը կամ բացակայում է, կամ այնքան է տարալուծված այլ ոլորտներին առնչվող դրույթներում, որ չափելի չէ:

ԲՀԿ-ն զինվորի կյանքն ու արժանապատվությունը հռչակում է բարձրագույն արժեք, սակայն այլընտրանքային ծառայության մասին որևէ ամրագրում չի անում, նաև խնդիրը չի դիտարկում մարդու իրավունքների տիրույթում: Չնայած կուսակցությունը մարդու իրավունքների հարգումը համարում է պետական կառավարման համակարգի խարխիսներից մեկը, սակայն շրջանցում է խղճի և կրոնական համոզմունքների ազատության խնդիրը:

Առաջին ընթերցմամբ քվեարկության ժամանակ ԲՀԿ-ն գրեթե ողջ կազմով կողմ է արտահայտվել փաթեթին, երկրորդ ընթերցմամբ՝ հիմնականում ձեռնպահ է քվեարկել: Հակասությունը թերևս պայմանավորված է այլընտրանքային ծառայության համար նախատեսվող մեղմացումները սահմանափակելու իր անուղղակի առաջարկությունը մերժվելու հանգամանքով:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱԿ-ը նախընտրական շրջանում հրապարակած 1 տասնյակից ավելի ոլորտային ծրագրերում չի անդրադառնում ոչ բանակի, և ոչ էլ մարդու քաղաքացիական իրավունքների պաշտպանության ոլորտներին: Մարդու իրավունքների պաշտպանությունը խմբակցությունը մեծապես կապում է արդարադատության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների հետ: Փաթեթի քվեարկության ժամանակ ՀԱԿ-ը երկակի մոտեցում է ցուցաբերել. խմբակցության մի մասը կողմ է արտահայտվել, մյուս մասը՝ ձեռնպահ: Լիարժեքորեն չստանձնելով փաթեթի ընդունման պատասխանավորությունը, խմբակցությունը, փաստորեն, լոյալություն է հանդես բերել այն ընդունելու անհրաժեշտության հանդեպ:

ՀՅԴ-ն, հանդես գալով ազգային պահպանողականության դիրքերից և առանցքային նշանակություն փառվ պետության անվտանգության ապահովմանն ու պաշտպանունակության բարձրացմանը, խուսափողական կեցվածք է որդեգրել՝ չմասնակցելով փաթեթի քվեարկությանը: Դժվար է ասել՝ արդյոք դա արվել է փաթեթի ընդունումը տապալելու՞ նկատառումով, թե՞ քվեարկության պատասխանավորությունից խուսափելու, քանի որ քննարկումների ժամանակ խմբակցությունը հարցադրումներով հանդես չի եկել, միասնական դիրքորոշում չի հայտնել: Ինչ վերաբերում է ծրագրային ամրագրումներին, ապա բանակի և պաշտպանության ոլորտը կուսակցությունը դիտարկում է մարտունակության բարձրացման, բանակում բարոյաժողովրդական մթնոլորտի առողջացման, կանոնադրական հարաբերությունների կարգավորման համարեքստրոմ՝ անտեսելով այլընտրանքային ծառայության առկայությունն ու դրան առնչվող հիմնահարցերը: Իսկ մարդու քաղաքացիական իրավունքներից առանձնացվում է միայն խոսքի և բազմակարծության իրավունքի երաշխավորումը:

«Ժառանգություն»-ը խորհրդարանական միակ ուժն է, որը ծրագրում հպանցիկ անդրադարձել է այլընտրանքային ծառայությանը՝ ամրագրելով, որ փոփոխությունների անհրաժեշտություն է տեսնում, սակայն չհստակեցնելով, թե ինչ փոփոխությունների մասին է խոսքը: Ոլորտային առաջնահերթությունների համարեքստրոմ կուսակցությունը զինվորների և սպաների մարտական ոգին բարձրացնելու, բանակի նկատմամբ հասարակական ու քաղաքացիական վերահսկողությունն ուժեղացնելու, զինված ուժերի մարտունակությունը բարձրացնելու անհրաժեշտությունն է ամրագրում: Այլընտրանքային ծառայության մասին օրենսդրությունը փոփոխելու ծրագրային դրույթը հիմք էր տալիս գոնե մասնակցելու կառավարության ներկայացրած նախագծի շուրջ քննարկումներին, ինչը հնարավորություն կտար հասկանալու՝ թե ինչ չափով են առաջարկվող լուծումներն ու փոփոխությունները համահունչ կուսակցության ակնկալիքներին: Խմբակցությունը քվեարկության ժամանակ երկակի մոտեցում է ցուցաբերել. «Ժառանգություն» կուսակցությունը ներկայացնող պատգամավորները ձեռնպահ են քվեարկել, «Ազատ դեմոկրատներ»-ի ներկայացուցիչները՝ կողմ: Ֆորմալ առումով այս դիրքորոշումը հակասում է ծրագրի տրամաբանությանը, բովանդակային առումով՝ դժվար է գնահատել:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՕԵԿ-ի նախընտրական ծրագրում առաջնահերթությունը տրվում է զինված ուժերի արդիականացմանը, զինծառայողների սուցիալական երաշխիքների ապահովմանը, ուլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեծացմանը: Սակայն ի տարբերություն մյուսների՝ ՕԵԿ-ն իր ծրագրում ամրագրում է նաև շարքային զինծառայողների իրավունքների պաշտպանությունը, որն անուղղակիորեն կարող է առնչվել այլընտրանքային զինվորական ծառայություն իրականացնողների իրավունքներին՝ հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է այն քաղաքացիներին, ովքեր պատրաստ են զինվորական ծառայությանը՝ առանց գենք կրելու: Այս իմաստով խորհրդարանական քննարկումների ժամանակ ներկայացված փաթեթին ՕԵԿ-ականների դրսևորած չափավոր քննադատական դիրքորոշումը կարելի է ծրագրային այս դրույթին հակասող գնահատել, քվեարկությունը՝ համապատասխանող. ՕԵԿ-ը ողջ կազմով կողմ է քվեարկել:

ՀՀԿ-ն ծրագիրը կառուցել է երկրի ու նրա քաղաքացիների անվտանգության ապահովման գաղափարական առանցքի շուրջ. այլընտրանքային ծառայության հիմնահարցն ամբողջությամբ շրջանցվել է, ինչը թերևս բխում է կուսակցության պահպանողական աշխարհընկալումից ու գաղափարախոսությունից: Սակայն իբրև քաղաքական մեծամասնություն՝ ՀՀԿ-ն հնարավորություն չունեցավ խուսափելու օրենքի ընդունման պատասխանատվությունից՝ պայմանավորված պարբերաբար Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացվող վճիռների և միջազգային կազմակերպությունների ճնշումներին իրողությամբ: Ուշագրավը, սակայն, այն է, որ իշխանությունը ներկայացնող քաղաքական ուժի ծրագրում մարդու իրավունքների հիմնահարցը փաստացի համակարգային բնույթ չունի:

Ծրագրային բյուջեպալորում

«Հայաստանի Հանրապետության բյուջեպային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով ինստիտուցիոնալ կամ մակրո մակարդակում խնդիրը ստանում է իր կարգավորումը, սակայն միկրո մակարդակում խնդիրներն ավելի շատ են և սուբյեկտիվ, քանի որ վերջնարդյունքում բյուջեպային միջոցներից օգտվող յուրաքանչյուր մարմնի ֆինանսական կառավարման գրագիտությունից է կախված հանրագումարային պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը:

Փորձագիտական վերլուծությունից (վերլուծությունն ամբողջությամբ հավելվածում):

ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2013 թ. ապրիլի 30-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության բյուջեպային համակարգի մասին» և «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքներում լրացումներ ու փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը՝ ձայների 74 կողմ, 3 դեմ, 29 ձեռնպահ հարաբերակցությամբ: Փաթեթին կողմ են քվեարկել կոալիցիոն խմբակցությունները և ՀՅԴ-ն: ԲՀԿ-ն ձեռնպահ է քվեարկել, մյուս խմբակցությունները ազատ են քվեարկել:

Փոփոխությունների բովանդակությունը. Օրենսդրական փոփոխություններով իրավական հիմքեր են ստեղծվում ծրագրային բյուջեպային մեթոդիկայի համար: Կառավարությունը նախատեսում է փոփոխական դասակարգմամբ «փողային» բյուջեից անցում կատարել ծրագրային: Անցումը նախատեսվում է փուլերով. նոր համակարգը մասնակիորեն կներդրվի 2016թ.-ից, ամբողջությամբ՝ 2018թ.-ից: Ծրագրային բյուջեպային մեթոդիկայի շեշտադրվում են ոչ թե բյուջեպային հարկացումները, ինչպես եղել է առ այսօր, այլ դրանց վերջնարդյունքը, առաջին պլան է մղվում նախանշված ծրագրերի կատարողականը:

Փոփոխությունների հիմնավորումները. Անցումը ծրագրային բյուջեպային մեթոդիկայի գործադիր հիմնավորումների, թույլ կտա մեծացնել ծախսերի պլանավորման հստակությունն ու կառավարման արդյունավետությունը, հնարավորություն կտա ճշգրիտ գնահատել բյուջեի կատարողականը:

Փաթեթի հիմնավորումից. Տարիներ շարունակ պետական ծախսերի կառավարման համակարգի գնահատման հիմքում դրվել են համապատասխան ծրագրի իրականացման համար պահանջվող, հարկացված եւ օգտագործված ռեսուրսների ցուցանիշները (թեև վերջին տարիներին զուգահեռաբար կիրառվել են նաև մի շարք ոչ ֆինանսական ցուցանիշներ): Այդ ցուցանիշները եւ դրանց համադրումները լիարժեք պարկերայում չեն փոխվել ծրագրի նպատակների, դրանց հասնելու համար առաջարկվող ուղիների, սպասվելիք արդյունքների եւ ընդհանրապես ծրագրի փոփոխական եւ սուբյեկտիվ արդյունավետության մասին: Բյուջեպային ծրագրերի կազմման եւ կատարման ժամանակ դրանց ներկայացման ձեւաչափը պետք է արտացոլի ոչ այնքան ծրագրային ծախսերի կառուցվածքը, որքան այդ ծրագրերի իրականացումից սպասվելիք (ստացված) արդյունքները:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրային բյուջեարավորում. կողմ՝ առանց ծրագրային հիմնավորումների

Եզակի օրենսդրական նախաձեռնություններից էր, որն ընդունվեց փոխըմբռնման մթնոլորտում: Քննարկման ժամանակ ընդդիմության ցուցաբերած պասիվությունը ցույց տվեց, որ ընդունելի է ծրագրային բյուջեարավորման ոչ միայն գաղափարը, այլև դրա ներդրման առաջարկվող մեխանիզմը: Մինչդեռ խմբակցությունների մի մասն իր նախընտրական ծրագրերում առհասարակ չի կարևորել բյուջեարավորման հիմնահարցը՝ որպես պետական միջոցների տնօրինման ու պլանավորման արդյունավետության կառուցակարգ:

ՀՀԿ-ն օրենսդրական փաթեթի քննարկման ժամանակ խմբակցություններից ամենաակտիվն էր, և առանց այդ ակտիվության փաթեթի քաղաքական ու հանրային նշանակությունը գուցե մնար աննկատ: Սակայն քաղաքական մեծամասնության նախընտրական ծրագրում բյուջեարային համակարգի և, մասնավորապես ծրագրային բյուջեարավորմանն անցնելու անհրաժեշտության մասին որևէ ակնարկ չկա: Մինչդեռ Հանրապետականի 2007թ. ծրագրում այս ոլորտին մի ամբողջ գլուխ էր հատկացված: Հետևաբար, օրենսդրական փաթեթին ՀՀԿ-ի կողմ արտահայտվելը պետք է գնահատել ոչ թե ծրագրային մոտեցումներին համապատասխանության, այլ նրա վստահությունը վայելող կառավարության նախաձեռնությանն աջակցելու համարեքստում:

ՕԵԿ-ը նույնպես ծրագրային բյուջեարավորման մոդելին անցնելու անհրաժեշտությունն իր նախընտրական ծրագրում չի ամրագրել, ինչն առավել է ընդգծվում սույիալ-տնտեսական ոլորտները հայեցակարգերի, ծրագրերի ու ռազմավարությունների հենքի վրա զարգացնելու կուսակցության սկզբունքային դիրքորոշման ֆոնին: Ծրագրային բյուջեարավորումն այն առանցքային տարրն է, որը նախադրյալներ է ապահովում նման քաղաքականության իրականացման համար: Օրենսդրական փաթեթի ընդունման հարցում ՕԵԿ-ի դրսևորած կառուցողականությունը, թերևս, պայմանավորված էր ծրագրային վերոնշյալ բացը լրացնելու հակվածությամբ: Պատահական չէ, որ քննարկումների ժամանակ բյուջեարավորման նոր մոդելին անցնելու անհրաժեշտությունը ՕԵԿ-ը պայմանավորեց հենց ծախսային միջնաժամկետ ու հեռանկարային ծրագրերի և ֆինանսական պետական պլանավորման միջև առանցքային կապի ապահովման անհրաժեշտությամբ:

«Ժառանգությունը» ևս իր ծրագրում բյուջեարային քաղաքականության վերանայման խնդիր չի դնում, թեև ծրագիրն ամբողջությամբ խարսխված է հարկային քաղաքականության վերանայման, պետական բյուջեի մուտքերի և ծախսերի թափանցիկության վրա: Խմբակցությունը չափավոր անտարբերություն ցուցաբերեց օրենսդրական փաթեթի նկատմամբ (քննարկումներին մասնակցեց խմբակցությունից ընդամենը մեկ պատգամավոր, ով շեշտը դրեց ծախսերի արդյունավետության որոշման որակական չափանիշների սահմանման վրա):

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Խմբակցության ներքին հակասությունները պայմանավորել են նաև քվեարկության հակասական պատկերը:

ԲՀԿ նախընտրական ծրագրում ևս ծրագրային բյուջեփափոխմանն անցնելու մասին ուղղակի ամրագրում չկա: Ծրագրային որոշ դրույթներում թաքնված են բյուջեփափոխման նման քաղաքականության փարրեր եկամուտների և ծախսերի հաշվեկշիռականության ու թափանցիկության, բյուջեի կապարման նկատմամբ վերահսկողության վերաբերյալ, որոնք, սակայն ընդհանրական բնույթ ունեն: Ծրագրային բյուջեփափոխման առանցքային բնութագրիչը՝ ֆինանսների ծրագրահեն ու արդյունքահեն կառավարման սկզբունքը, ըստ էության, դուրս է մնացել ԲՀԿ-ի ուշադրությունից: Փաթեթի քննարկումներին ԲՀԿ-ն մասնակցություն գրեթե չունեցավ, իսկ քվեարկելիս քաղաքականացված մոտեցում ցուցաբերեց: Խմբակցությունն առաջին ընթերցմամբ քվեարկության ժամանակ ողջ կազմով կողմ քվեարկեց փաթեթին, սակայն երկրորդ ընթերցման ժամանակ ձեռնպահ էր. Խմբակցությունը ավելի վաղ հայտարարել էր, որ ձեռնպահ է քվեարկելու կառավարության բոլոր նախաձեռնություններին, քանի որ իրենց նախագծերին գործադիրը դրական եզրակացություն չի տալիս:

ՀԱԿ Խմբակցությունը հարցի առնչությամբ հակասական վարքագիծ է դրսևորել: Դաշինքի «100 քայլ» ծրագրում հստակ ամրագրվում է պետական ծախսերը ծրագրային բյուջեփափոխման մոդելով իրականացնելու և տողային կամ ՀԱԿ-ի ձևակերպմամբ՝ «նախահաշվային» ֆինանսավորումը նվազագույնի հասցնելու գաղափարը: Մինչդեռ փաթեթի քվեարկության ժամանակ ՀԱԿ անդամները հիմնականում դեմ կամ ձեռնպահ են քվեարկել: Հիմնավորումների բացակայության պայմաններում նման վարքագիծը կարելի է բացատրել միայն ՀԱԿ-ում ի հայտ եկած ներքին բաժանարար գծերով, որոնք աստիճանաբար անհնար են դարձնում Խմբակցության ներսում միասնական տեսակետների որդեգրումը:

ՀՅԴ-ի համար անցումը ծրագրային բյուջեփափոխման մոդելին սկզբունքային է, որը հստակ բանաձևված է նրա նախընտրական ծրագրում: ՀՅԴ-ն ոչ միայն պետական, այլև համայնքային բյուջեներն այս սկզբունքով կազմելու խնդիր է առաջադրում՝ միասնականության ապահովման նկատառումով: Քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ նման ողելին անցումը կուսակցությունը դիտարկում է նաև ընդդիմության կողմից բյուջեի ու կառավարության փարրեկան ծրագրերի կատարողականի նկատմամբ վերահսկողության մեխանիզմները հստակեցնելու, քաղաքական մեծամասնության հաշվեկշիռականությունն ու պատասխանատվությունը մեծացնելու շրջանակում: Թե առաջին, թե երկրորդ ընթերցման ժամանակ ՀՅԴ-ն կողմ է արտահայտվել փաթեթին՝ առաջին հերթին դա բխեցնելով սեփական նախընտրական ծրագրից:

ԱԺ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արտոնագրերի կրճատում

«Հ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնը», որը հայտնի է նաև «կարգավորիչ գիլդոսին» պայմանական անունով, ստեղծվել է 2011թ., կառավարության որոշմամբ: Կենտրոնի նպատակը կարգավորում պարունակող իրավական ակտերի պարզեցումն է, դրանցով սահմանված մեխանիզմների ու բիզնես գործընթացների կրճատումը: Հայաստանում այսօր գործում է կարգավորում պարունակող 26 000 իրավական ակտ: Գործունեության համար նախատեսված երկու տարիների ընթացքում կենտրոնը նախատեսում է կրճատել կարգավորումների նվազագույնը 30%-ը եւ պարզեցնել 20%-30%-ը:

3-րդ նստաշրջանի ընթացքում Ազգային ժողովը քննարկել և ընդունել է հանրային ծառայությունների ոլորտին առնչվող օրենսդրական երկու փաթեթ, որոնք մշակվել են «կարգավորիչ գիլդոսինի» քաղաքականության շրջանակում:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող օրենքը (հարակից 2 օրենքներով) ընդունվել է ապրիլի 4-ին՝ ձայների 77 կողմ, 2 դեմ, 29 ձեռնպահ հարաբերակցությամբ, «Էներգետիկայի մասին» օրենքը (հարակից 3 օրինագծերով) ընդունել է արտահերթ նստաշրջանի ընթացքում հունիսի 19-ին, ձայների 70 կողմ, 8 դեմ, 15 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Փոփոխությունների բովանդակությունն ու հիմնավորումները. Օրենսդրական առաջին փաթեթով նախատեսվում է վերացնել էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում գործող պարզ լիցենզիաներից 2-ը, պարզեցնել բարդ լիցենզիաներից մեկի տրամա ընթացակարգը՝ ամրագրելով, որ այն նույնպես կհանվի 2015 թվականին: Նշված երեք լիցենզիաների պահանջի վերացումը, ըստ կառավարության հիմնավորումների, կկրճատի 12 բիզնես գործընթաց՝ կապված լիցենզիաների տրամադրման, գործողության ժամկետի երկարաձգման, վերաձեւակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխման, կրկնօրինակի ստացման խնդիրների հետ:

Օրենսդրական երկրորդ փաթեթով նախատեսվում է Էներգետիկայի ոլորտում գործող 19 լիցենզիաներից 8-ի կրճատում: Այս դեպքում նույնպես, ըստ գործադիրի հիմնավորումների, լիցենզիաների վերացումը կրճատելու է մոտ մեկ տասնյակ բիզնես գործընթաց:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Փաթեթների քննարկումներին նկատելիորեն ակտիվ էին Հանրապետական խմբակցության պատգամավորները: Խորհրդարանական ընդդիմության պասիվ վերաբերմունքը թերևս պայմանավորված էր նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունենալու հանգամանքով:

«Կարգավորիչ գիլյոտինը» ծրագրերում

Խորհրդարանական ուժերի մեծ մասը նախընտրական ծրագրերում որոշակի ու համակարգված չի դիտարկել բյուրոկրատական քաջքշուկի կրճատման խնդիրը, որպես հակակոռուպցիոն գործիք և պետական համակարգի ու բիզնես գործունեության արդյունավետության բարձրացման միջոց:

Կառավարության ուղեգիծը արտացոլված է ՀՀԿ-ի ծրագրային առաջնահերթություններում. շեշտվում է կրկնվող գործառույթների բացառման և տեսչական մարմինների կրճատման անհրաժեշտությունը: Փաթեթներն ուղղված են լիցենզիաների կրճատմանը, սակայն առայժմ չեն հանգեցնում լիցենզավորող մարմինների շրջանակի շոշափելի փոքրացման:

Ի տարբերություն կոալիցիոն գործ-ընկերոջ՝ ՕԵԿ-ը խնդիրն իր ծրագրում դիտարկում է հակակոռուպցիոն պայքարի, «չարաշահումների և հնարավոր դրամաշորթումների ռիսկերը» նվազեցնելու շրջանակում: Ծառայությունների վարչարարության պարզեցումը, իբրև կառավարման արդյունավետության և միջոցների տնտեսման մեխանիզմ, ծրագրում չի կարևորվում: Չնայած փաթեթներին կողմ արտա-հայտվելուն՝ քննարկումներին ցուցաբերած համեստ մասնակցությունը հնարավորություն չէր տալու հասկանալ, թե խմբակցությունն առաջարկվող փոփոխությունները որքանով է ծրագրային նպատակադրումները կենսագործելու մեխանիզմ համարում:

ԲՀԿ-ն ծրագրում զարգացնում է «վերահսկողության և պետական միջամտության ռեժիմները մեղմացնելու» միջոցով փոքր և միջին ձեռներեցությունը զարգացնելու համար անհրաժեշտ բարենպաստ միջավայրի ստեղծման կոնցեպցիան: «Կարգավորիչ գիլյոտինի» քաղաքականությունն այս առումով համահունչ է կուսակցության ծրագրային տրամաբանությանը: Այնուամենայնիվ, ԲՀԿ-ն երկու փաթեթ-ներին էլ ձեռնպահ է քվեարկել՝ փաստացի զոհաբերելով ծրագրային նպատակները կառավարության դեմ հայտարարած քաղաքական դեմարշին:

ՀՅԴ-ն պետական մարմինների միջամտության նվազեցումը դիտարկում է որպես տնտեսավարման դաշտի պարզեցման, բիզնես հնարավորությունների մեծացման հնարավորություն: Ծրագրում շեշտը դրվում է լիցենզավորման վարչաիրավական մեխանիզմը քաղաքացիաիրավականով փոխարինելու անհրաժեշտության վրա՝ պետությանը վերապահելով տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունքների հանդեպ միայն

ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

վերահսկողական գործառույթ: Քննարկումներից պարզ չդարձավ, թե Դաշնակցությունը որքանով է ոլորտայիննոր կարգավորումների համապետքստում տեսնում անցումը քաղաքացիական իրավահարաբերությունների ձևավորմանը:

ՀԱԿ-ի համար առաջարկվող փոփոխություններն ընդունելի էին, քանի որ դրանք գրեթե ամբողջությամբ համընկնում են դաշինքի ծրագրային հիմնադրույթներին: «100 քայլ»-ում այս քաղաքական ուժը առաջնայնությունը տալիս է պետական կառավարման համակարգում կրկնվող գործառույթների և, որ ավելի սկզբունքային է, պարզաբանության և կարգապահության գործառույթների համապետքստում բացառմանը: ՀԱԿ-ը, սակայն, առավել կարևորում է օպտիմալացման խնդիրը՝ պնդելով, որ վերանայումների արդյունքում պետական ապարատը պետք է կրճատվի 1.5 անգամ՝ փոխարենը 2.2 անգամ բարձրացնելով աշխատավարձերը: «Գիլյոտինի» քաղաքականությունը պետական ապարատի կրճատման խնդիրն առայժմ առաջնային չի դիտարկում:

«Ժառանգություն» ծրագիրը հակակոռուպցիոն հստակ ուղղվածություն ունի: Չնայած դրան՝ վարչարարության, բյուրոկրատիկ կրճատման խնդիրը ծրագրում համակարգված կամ գոնե հռչակագրային մակարդակով տեղ չի գտել: Խմբակցությունը փաթեթների քննարկումներին գրեթե չի մասնակցել, հարցադրումներով ու ելույթներով հանդես չի եկել՝ այդ շրջանում նախապատվությունը տալով քաղաքական այլ պրոցեսներում ակտիվ ներգրավվածությանը:

Գեներային հավասարություն

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքի նախագիծը, որը հեղինակել են կառավարությունը և ԱԺ «Օրինաց երկիր» խմբակցության պարզամավորներ Հեղինե Բիշարյանն ու Հովհաննես Մարգարյանը, երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ Ազգային ժողովն ընդունել է մայիսի 20-ին:

Օրինագծի նախապատմությունը. Նախագիծը դեռևս 2011 թվականին ընդգրկվել է 4-րդ գումարման Ազգային ժողովի նստաշրջանի և քառօրյա նիստերի օրակարգ: Առաջին ընթերցմամբ ընդունվել է նախորդ խորհրդարանում՝ 2012 թվականին: Կողմ է քվեարկել 79 պարզամավոր՝ խորհրդարանում ներկայացված բոլոր քաղաքական ուժերից՝ ՀՀԿ, ԲՀԿ, ՀՅԴ, ՕԵԿ, «Ժառանգություն»: Դեմ քվեարկած 2 պարզամավորներից մեկը եղել է Տիգրան Թորոսյանը, մյուսը՝ ԲՀԿ-ական Էռնեստ Սողոմոնյանը:

Երկրորդ ընթերցմամբ ընդունվել է 2013 թվականի մայիսին, այս անգամ՝ 103 կողմ, 5 դեմ ձայնով: Դեմ են քվեարկել 1 հանրապետական և 4 դաշնակցական պարզամավոր:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ նախագիծն ընդունվել է ձայների 108 կողմ, 1 դեմ, 8 ձեռնպահ հարաբերակցությամբ: Դեմ քվեարկած միակ պատգամավորը ՀՀԿ անդամ Արմեն Մխիթարյանն է, ձեռնպահ են քվեարկել ՀՀԿ-ից Հակոբ Հակոբյանն ու Վարդան Այվազյանը, ՀԱԿ-ից Հրանտ Բագրատյանը, «Ժառանգությունից» 2, ՀՅԴ-ից 3 պատգամավոր:

Օրինագծի բովանդակությունը. Օրենքը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի եւ հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները եւ կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները: Մասնավորապես, արգելում է սեռի հատկանիշով խտրականությունը, իսկ դրա դրսևորման դեպքում նախատեսում է դիմումների քննարկման ինստիտուտ ու սահմանում է դիմումների ներկայացման եւ քննարկման կարգը: Օրենքը, ըստ հեղինակների, պետք է նպաստի գենդերային հավասարության, հանդուրժողականության եւ բազմակարծության մշակույթի ձեւավորմանը եւ հայր-իշխանական կարծրափայտի, գերիշխման ու բռնության մշակույթի հաղթահարմանը:

Ու՞մ ձեռքով է «ձեռքբերովին» հայտնվել օրենքում

Երկու գումարման Ազգային ժողովներում երեք ընթերցում անցած մայր օրենքը օրենսդիրն ընդունեց առանց թեժ քննարկումների, հանրությունն էլ, ինչպես ընդունվող օրինագծերի ճնշող մեծամասնության դեպքում, անհաղորդ մնաց խորհրդարանական քննարկումներին: Փոխարենը հանրային հեղափոխությունը մեծապալ, ու քննարկումներն սկսվեցին օրենքի ընդունումից հետո: Պատճառը օրենքի 3-րդ հոդվածում սահմանվող հասկացությունների ձևակերպումն է, համաձայն որի «գենդեր» և «գենդերային» բառերը նշանակում են «տարբեր սեռի անձանց՝ ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց եւ տղամարդկանց միջեւ հարաբերությունների սոցիալական հայեցակետ...»: Այս հոդվածում «թաքնված» վրանգների մասին նախ խոսեց նախկին պատգամավոր Խաչիկ Ստամբուլյանը: Օրենքին դեմ արտահայտվեցին մշակութային գործիչներ, հասարակական կազմակերպություններ, եկեղեցին: Օրինագծի շուրջ բարձրացած աղմուկից հետո ՕԵԿ-ական Հովհաննես Մարգարյանը հարկ համարեց հիշեցնել, որ ի սկզբանե իրենց հեղինակած նախագիծը կառավարության կողմից բազմաթիվ փոփոխությունների է ենթարկվել, ու հենց դրանից հետո են նախագծում հայտնվել ձեւակերպումներ, որոնք առաջ են բերել հանրության դժգոհությունը:

Կազմակերպվեցին քննարկումներ, որոնց ընթացքում կառավարության ներկայացուցիչները համոզում էին, որ գործադիրը ամեննին էլ դեմ չէ ավանդական ընտանիքին ու պատրաստ է փոփոխություններ կատարել օրենքում, հանել չարաբաստիկ «ձեռքբերովի» բառը, թեպետ այդպես էլ չկարողացան պատասխանել, թե ի վերջո, ում կամքով և ինչու է այդ սահմանումը տեղ գտել օրենքում:

ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դժվար չէ ենթադրել, որ 5-րդ գումարման Ազգային ժողովի՝ սեպտեմբերին մեկնարկող աշնանային նստաշրջանում «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը նորից կհայտնվի պարզամավորների ուշադրության կենտրոնում. կառավարությունը փոփոխությունների նախագիծը արդեն ուղարկել է Ազգային ժողով, ՕԵԿ-ը, որպես համահեղինակ, փոփոխություններին դեմ չէ, բայց սա, փոփոխությունների մի նախագիծ էլ ԲՀԿ-ական պարզամավոր Նաիրա Զոհրաբյանն է շրջանառության մեջ դրել՝ առաջարկելով օրենքի 3-րդ հոդվածից հանել «ձեռքբերովի» բառը ու գենդերը սահմանել որպես «կանանց եւ տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ...»:

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում քննարկվել է ընդդիմադիր խմբակցությունների միայն երկու օրենսդրական նախաձեռնություն. «Ժառանգություն» խմբակցության օրինագիծը՝ ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին, և ՀԱԿ խմբակցության նախաձեռնությունը՝ 2008թ. մարտիմեկյան դեպքերի ուսումնասիրությանն առնչվող ԱԺ Ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին: Երկու նախաձեռնություններն էլ մերժվել են:

«Ժառանգություն». Ընտրական օրենսգիրք

ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը «Ժառանգություն» խմբակցությունը շրջանառության մեջ դրեց 2013թ.-ի մարտին: Կառավարությունը և գլխադասային՝ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովը նախագծին դրական եզրակացություն չտվեցին, բայց խմբակցությունը օգտվեց ԱԺ կանոնակարգի ընձեռած հնարավորությունից, նախագիծը համարեց արտահերթ, և մայիսի 20-ին այն ընդգրկվեց ԱԺ չորսօրյա նիստերի օրակարգ:

«Ժառանգությունն» առաջարկում էր Ընտրական օրենսգրքում ամրագրել, որ ընտրողների ստորագրած ցուցակները, տեղամասային կենտրոնների փակվելուց անմիջապես հետո, պետք է հրապարակվեն, և դրանք կարելի է լուսապատճենել, լուսանկարել եւ տեսանկարահանել: Հեղինակները համոզված էին, որ սա կմեծացնի հասարակության վստահությունը ընտրական գործընթացների նկատմամբ: Մեծամասնության կարծիքով, սակայն, փոփոխությունը հակասում էր Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշմանն ու ՀՀ Սահմանադրությանը, համաձայն որի ընտրությունները Հայաստանում անցկացվում են գաղտնի քվեարկությամբ:

Ձայների՝ 43 կողմ (ՀԱԿ, ՀՅԴ, ԲՀԿ, «Ժառանգություն»), 64 դեմ (ՀՀԿ, ՕԵԿ) և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ նախագիծը չընդունվեց:

ՀԱԿ. Մարտի 1-ի հանձնաժողով

ՀԱԿ խմբակցության նախաձեռնությունը՝ «2008թ. մարտի 1-2-ին Երեւան քաղաքում Կասը անձանց սպանությունների կամ մահ պատճառելու քաղաքացիական անձանց, ոստիկանության աշխատակիցներին ու զինծառայողներին հրազենային ու այլ մարմնական վնասվածքներ պատճառելու դեպքերով ՀՀ ոստիկանության, Հատուկ քննչական ծառայության եւ ՀՀ գլխավոր դատախազության ձեռնարկած միջոցառումների ու գործողությունների հիմնավորվածության եւ օրինականության հարյը ուսումնասիրող ՀՀ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին», մինչև նիստերի դահլիճ հասնելը, քննարկման մի քանի փուլ անցավ: Նախագիծը շրջանառության մեջ էր դրվել 2010թ.-ի նոյեմբերին: Դեկտեմբերին պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովում մինչև 1 փարով հետաձգվեց դրա ընդգրկումը նստաշրջանի օրակարգ: Առաջարկը մեծամասնությանն էր, որը խոստացավ նախագծի քննարկումը նախագահական ընտրություններից հետո կազմակերպելու դեպքում կողմ քվեարկել դրան, եթե նախագծից հանվեն քաղաքական գնահատականները, և ամրագրվի, որ հանձնաժողովի եզրակացությունը լինելու է բացառապես հանձնաժողովինը և ոչ թե Ազգային ժողովինը: ՀԱԿ-ն այս առաջարկություններն ընդունեց, 2013թ.-ին հանձնաժողովը նախագծին դրական եզրակացություն փվեց, ու այն ընդգրկվեց չորսօրյա նիստերի օրակարգ: Նիստերի դահլիճում, սակայն, պարզվեց, որ մեծամասնությունը, նախագիծը ընդունելու համար, նոր առաջարկություններ է պատրաստել: Առանցքայինը, որի շուրջ ՀՀԿ-ն ու ՀԱԿ-ը համաձայնության չեկան, վերաբերում էր քրեական գործի վարույթին մասնակցած կամ մասնակցող քննիչներին ու հետաքննիչներին. ՀՀԿ-ն պնդում էր, որ նրանք հանձնաժողովին պարզաբանումներ փան միայն սեփական նախաձեռնությամբ, ՀԱԿ-ը դեմ էր: Նախագծի քվեարկությունը 2 շաբաթով հետաձգվեց, սակայն կողմերը ընդհանուր եզրակացության չեկան:

Ձայների 47 կողմ (ՀԱԿ, ՀՅԴ, ԲՀԿ, «Ժառանգություն»), 56 դեմ (ՀՀԿ, ՕԵԿ) և 2 ձեռնպահ հարաբերակցությամբ նախագիծը չընդունվեց :

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Աժ կանոնակարգ օրենքի համաձայն Էթիկայի հանձնաժողովը որևէ անձի դիմումի հիման վրա՝

ա) Ազգային ժողով եզրակացություն է ներկայացնում պարզամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու վերաբերյալ,

բ) որոշում է կայացնում պարզամավորի կողմից Էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ.

գ) որոշում է կայացնում պարզամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու՝ Կանոնակարգի 6.2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պահանջը չկատարելու վերաբերյալ:

Աժ Էթիկայի երկրասարդ հանձնաժողովը ձևեռային արձակուրդի մեկնեց՝ անավարտ թողնելով վարույթ ընդունած 3 դիմումի քննություն: Գարնանային նստաշրջանի ժամանակահատվածում դրանց վերաբերյալ կայացվելիք որոշումները վճռորոշ ազդեցություն պետք է ունենային հանձնաժողովի վարկանիշի վրա:

Հինգերորդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանում Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովը որոշումներ է կայացրել 2012թ.-ին վարույթ ընդունած 3 դիմումների վերաբերյալ. կարճել է «Ռազմավարական մշակումների կենտրոն» ՀԿ-ի ստացված դիմումի քննությունը: Այն վերաբերում էր ԲՀԿ-ական պարզամավոր Միքայել Մելքումյանին առնչվող մի տեսանյութի, ըստ որի՝ պարզամավորը զբաղվում է ձեռնարկարիական գործունեությամբ: Մերժել է ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանի դիմումը՝ 2012թ.-ի նոյեմբերի 21-ի արտահերթ նիստից բացակայած 83 պարզամավորների մասին, իսկ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպության դիմումի վերաբերյալ որոշել է, որ ՀՀԿ-ական Միեր Սեդրակյանը խախտել է պարզամավորի Էթիկայի նորմերը (պարզամավորը սպառնացել էր պոկել խորհրդարանում իրեն հարց ուղղած լրագրողի ծնոպը):

Տեղեկանք: Հինգերորդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի ընթացքում Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովը հրավիրել է 14 նիստ, ստացել է 6 դիմում, որոնցից վարույթ է ընդունել միայն մեկը: 5 դիմում մերժել է վարույթ ընդունել, վարույթ ընդունված միակ դիմումի առնչությամբ կայացրել է բացասական եզրակացություն:

ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Դիմումներից 3-ը հանձնաժողովը ստացել է քաղաքացիներից: Դրանցից երկուսը հանձնաժողովը մերժել է առանց քննության առնելու. մեկը՝ քննարկելուց հետո (վերջինի հեղինակը՝ Մոսկվայի Կոնստանտին Արմինե Թուրունջյանը, հանձնաժողովից պահանջում էր էթիկայի կանոնների փոփոխությունից քննության առնել ՀՀ-ական պարզամավոր Նաիրա Կարապետյանի վարքագիծը): Էթիկայի հանձնաժողովը 3 դիմում էլ ստացել է ՀՀ-ներից. մեկը՝ «Կանանց ռեսուրսային կենտրոնից», երկուսը՝ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ»: Երեք դիմումներն էլ հանձնաժողովը մերժել է ընդունել վարույթ: Դրանցից մեկը վերաբերում էր հանրապետական պարզամավոր Հայկ Բաբուխանյանին, երկրորդը՝ Սամվել Ալեքսանյանին, երրորդը՝ Ազգային ժողովում իրենց հարազատներին որպես օգնական աշխատանքի ընդունած պարզամավորներին:

Էթիկայի հանձնաժողովի արդյունավետությունը. փորձագիտական կարծիք

Գոռ Աբրահամյան

Հաշվետու ժամանակաշրջանում ԱԺ էթիկայի հանձնաժողովի գործունեության ընդհանուր դիրքարկունը թույլ է տալիս խոսել որոշ միտումների մասին:

■ Հանձնաժողովը կորցնում է շահերի բախման վերահսկողության կարևորագույն գործառույթը, մինչդեռ ստեղծման հիմնական նպատակներից մեկը հենց այս դաշտը կարգավորելն էր: Ապացույցը ԲՀԿ խմբակցության պարզամավոր Միքայել Մելքունյանի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ դիմումի ընթացքը կարճելու որոշումն էր: Հանձնաժողովը գտավ, որ «Ռազմավարական մշակումների կենտրոն» ՀՀ-ի կողմից ներկայացված ձայնագրությունը, որտեղ Մելքունյանը խոստովանում է անձամբ ձեռնարկատիրական, մասնավորապես ռիելթորական գործունեությամբ զբաղվելու մասին, բավարար ապացույց չէ: Այս գործով հանձնաժողովի կայացրած որոշումը նախադեպ է ստեղծում ձեռնարկատիրական գործունեություն ծավալող պարզամավորներին անուղղակի երաշխիք տալու, որ եթե նրանք գրավոր չեն խոստովանում այդ հանգամանքը, ապա պաշտպանվում են որևէ այլ եղանակով իրականության բացահայտումից և դրա համար պատասխանատվության ենթարկվելու հեռանկարից:

■ Նկատվում է էթիկայի խախտումների ապացուցողական բազան հնարավորինս նեղացնելու և ձևականացնելու, դրանով ԱԺ էթիկայի հանձնաժողովին դիմելու դեպքերն ու առիթները սահմանափակելու միտում: Բացի Մելքունյանի գործից, որի դեպքում հանձնաժողովը ապացույց չհամարեց ներկայացված փոփոխությունը, մերժվեց նաև «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» կազմակերպության դիմումը, որը կապված էր նախագահական ընտրությունների ժամանակ 07 ընտրատարածքի ընտրատեղամասերից մեկում ԱԺ պարզամավոր Սամվել Ալեքսանյանի կողմից փողամասային ընտրական հանձնաժողովի անդամներին և վստահված անձանց իր գործառույթներից ու իրավասություններից դուրս հրահանգներ տալը էթիկայի

ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

կանոնների խախտման տեսանկյունից քննության առնելուն: Դիմումը հիմնավորվում էր տեսանյութով: Հանձնաժողովը մերժեց այն՝ պարզառաքանելով, որ տեսանյութն առնչություն չունի դիմումում առկա պնդումների հետ:

■ Ներկայացված հիմնավորումներն անտեսելու կամ դրանք որպես ապացույց ըստ նպատակահարմարության դիտարկելու հանգամանքը նվազեցնում է հանձնաժողովի նկատմամբ հանրային վստահության մակարդակը և կանխակալ կարծիք ձևավորում դիմելու նպատակահարմարության վերաբերյալ: 3-րդ նստաշրջանի ընթացքում հանրային սեկտորի քաղաքացիներից և հասարակական կազմակերպություններից ստացված դիմումների քանակը կիսով չափ կրճատվել է. աշնանային նստաշրջանի ընթացքում հանձնաժողովը ստացել է 13 , իսկ գարնանային ընթացքում՝ 6 դիմում, ներկայացվող դիմումների գերակշիռ մասը կամ վարույթ չի ընդունվել , կամ էլ մերժվել է վարույթ ընդունվելուց հետո:

■ Հանձնաժողովի գործունեության մեջ նկատվում է քաղաքական շահերով ու պայմանավորվածություններով առաջնորդվելու միտում: Տարեսկզբին էթիկայի հանձնաժողովը որոշեց, որ 2012թ-ի նոյեմբերի 21-ի արտահերթ նիստից քաղաքական մեծամասնությունը ներկայացնող 83 պարզամավորի բացակայությունը էթիկայի կանոնների խախտում չէ: Բվեարկության ժամանակ վճռորոշ էր ԲՀԿ ներկայացուցչի դիրքորոշումը: Դրանից մոտ մեկ շաբաթ անց հանձնաժողովը կարճեց ԲՀԿ անդամ Միքայել Մելքումյանի հետ կապված վերոնշյալ գործը: Այս զուգահիշությունը կասկածներ հարույցեց առ այն, որ կատարվածը մեծամասնության և իրեն այլընտրանք հռչակած ԲՀԿ-ի միջև քաղաքական պայմանավորվածության արդյունք է՝ «ծառայությունը ծառայության դիմաց» սկզբունքով:

Արդյունքում, ԱԺ ընդդիմադիր խմբակցությունները քննարկում են էթիկայի հանձնաժողովում իրենց մասնակցությունը շարունակելու նպատակահարմարության հարցը: Պատահական չէ, որ վերջին՝ Նաիրա Կարապետյանին վերաբերող դիմումի առնչությամբ հանձնաժողովը որոշում կայացրեց առանց ՀԱԿ և ՀՅԴ ներկայացուցիչների:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

5-րդ գումարման Ազգային ժողովի 3-րդ նստաշրջանի հիմնական առանձնահատկություններից մեկը լիազուստ նիստերից ու քվեարկություններից պարզամավորների բացակայությունների խնդրի նկատմամբ ԱԺ ղեկավարության ուշադրության մեծացումն էր: Այն բանից հետո, երբ ընդդիմադիր խմբակցությունները բոյկոտեցին ՀՀ նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնի ստանձնման նպատակով հրավիրված Ազգային ժողովի հատուկ նիստը, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի կողմից աննախադեպ ուշադրության արժանացավ նիստերից պարզամավորների բացակայությունների խնդիրը: Նրա հանձնարարությամբ ԱԺ աշխատակազմը սկսեց հրապարակել պարզամավորների անհարգելի բացակայությունների վիճակագրությունը՝ ըստ ամիսների ու նիստերի: Դրանց հիման վրա անհարգելի բացակայած պարզամավորների նկատմամբ սկսեցին կիրառվել կարգապահական փուլժեր՝ աշխատավարձի մասնակի կամ ամբողջական չվճարման փեսքով:

Բացակայությունների խնդրի նկատմամբ ուշադրության մեծացմանը թերևս նպաստել էր նաև Սահմանադրական դատարանի ապրիլի 16-ին կայացրած որոշումը:

ՄԴ որոշումը պարզամավորների բացակայության խնդրի վերաբերյալ

Անցած 17 փարիների ընթացքում Սահմանադրական դատարանը միայն 4 անգամ է ԱԺ պարզամավորների նախաձեռնությամբ ներկայացված հարց քննարկել:

2012թ. նոյեմբերի 21-ին Ազգային ժողովի ՀԱԿ, ՀՅԴ, ԲՀԿ և «Ժառանգություն» խմբակցությունները ներկայացնող 48 պարզամավորներ արտահերթ նիստ նախաձեռնեցին, որը չկայացավ խորհրդարանական մեծամասնության բոյկոտի ու քվորում չապահովելու պատճառով: Արտահերթ նիստ նախաձեռնած պարզամավորներից 34-ը դեկտեմբերի 12-ին դիմում ներկայացրեցին ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ԱԺ կանոնակարգ օրենքի 44-րդ հոդվածի 4-րդ կետի սահմանադրականությունը: Ըստ դիմողների՝ կանոնակարգի հիշյալ հոդվածը հակասում է Սահմանադրության 70-րդ և 71-րդ հոդվածներին:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարում է Ազգային ժողովի նախագահը՝ Հանրապետության Նախագահի, պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի կամ կառավարության նախաձեռնությամբ: Արտահերթ նստաշրջանը կամ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով եւ ժամկետում:

ՀՀ սահմանադրություն, Հոդված 70.

Աժ նիստն իրավագոր է, եթե սահմանված կարգով գրանցվել է պարզամավորների ընդհանուր թվի կեսից ավելին (քվորումն ապահովված է)

Աժ կանոնակարգ օրենք, հոդված 44, կետ 4

Ըստ դիմողների՝ սահմանադրական վերոնշյալ լիազորությունը կոչված է պարզամավորների 1/3-ին՝ խորհրդարանական փոքրամասնությանը, հնարավորություն տալ իր համար նախընտրելի ժամկետներում և օրակարգով Աժ արտահերթ նստաշրջան կամ նիստ հրավիրել: Մինչդեռ Աժ կանոնակարգ օրենքի վերոնշյալ կետն ի չիք է դարձնում այդ հնարավորությունը՝ այն պայմանավորելով Ազգային ժողովի մեծամասնության կամքով կամ ցանկությամբ:

2013թ. ապրիլի 16-ին Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթները ճանաչեց Սահմանադրությանը համապատասխանող, փոխարենը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց Աժ կանոնակարգ օրենքի 4 այլ դրույթներ, որոնք պարզամավորների կողմից չէին վիճարկվում, բայց համակարգային առումով, ըստ ՄԴ-ի, փոխկապակցված էին վեճի առարկայի հետ:

ՄԴ որոշման իրավական բովանդակությունը. փորձագիտական Արտակ Զեյնալյան

Սահմանադրական դատարանը որոշման մեջ արձանագրել է, որ իրոք առկա է խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության խնդիր, սակայն այն պայմանավորված չէ վիճարկվող դրույթով: Նշել է, որ խորհրդարանական փոքրամասնության իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներից մեկը պարզամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդին սահմանադրական սուբյեկտ ճանաչելն է և վերջինին Աժ արտահերթ նստաշրջան կամ նիստ գումարելու նախաձեռնությամբ օժտելը:

Բացահայտելով վիճարկվող օրենքի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը՝ ՄԴ-ն արձանագրել է, որ որևէ պարզամավոր իրավունք չունի անհարգելի բացակայել Աժ նիստերից և խուսափել մշտական հիմունքներով իր լիազորությունները կատարելու սահմանադրական պահանջից:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

Ըստ ՍԳ-ի՝ ՀՀ օրենսդրությունը քաղաքական դրդապատճառներով ԱԺ նիստերին չմասնակցելու որևէ իրավական հիմք չի նախատեսում: Բացառությամբ օրենքով սահմանված սպառիչ ցանկի, մյուս բոլոր բացակայություններն անհարգելի են և Սահմանադրության 67-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է առաջացնեն համարժեք իրավական հետևանքներ, այն է՝ լիազորությունների դադարում:

Պարզամավորի լիազորությունները դադարում են Ազգային ժողովի լիազորությունների ժամկետն ավարտվելու, Ազգային ժողովն արձակվելու, Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտվելու, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելու, մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու, ազատագրված դատապարտվելու, անգործունակ ճանաչվելու եւ հրաժարականի դեպքերում:

Պարզամավորի լիազորությունների դադարման կարգը սահմանվում է Ազգային ժողովի կանոնակարգ օրենքով:

ՀՀ սահմանադրություն, հոդված 67

Անկախ հանգամանքից՝ արտահերթ նիստը կամ նստաշրջանը գումարվել են հանրապետության նախագահի, պարզամավորների մեկ երրորդի թե՛ կառավարության կողմից, բոլոր պարզամավորները պարտավոր են մասնակցել ԱԺ նիստերին: Այս սկզբունքից շեղվելու բոլոր դեպքերը կհանգեցնեն պարզամավորի ու ԱԺ-ի անգործության՝ դրանից բխող իրավական հետևանքներով, այդ թվում՝ պարզամավորի լիազորությունների դադարմամբ:

Բացի հարգելի բացակայությունների վերաբերյալ օրենքով նախատեսված հիմքերից, ԱԺ կանոնակարգի 99-րդ հոդվածով ԱԺ-ին իրավասություն է վերապահվում որոշումով լուծելու բացակայությունները հարգելի կամ անհարգելի համարելու հարցը, ինչն, ըստ էության, դառնում է պարզամավորական մեծամասնության կամաարտահայտումը:

Դատարանը եզրահանգել է, որ Սահմանադրության 67-րդ հոդվածում ամրագրված «դադարում» եզրույթը սահմանադրաիրավական այն բնույթն ունի, որ հետևանքն առաջանում է իրավունքի ուժով, երբ առկա է փաստը: ԱԺ-ն կարող է միայն «ի գիտություն ընդունել» իրավական փաստի ու դրանից բխող հետևանքի առկայությունը, իրավասություն չունենալով քվեարկությամբ կասեցնել սահմանադրական նորմի գործողությունը և «դադարում» եզրույթը գործնականում փոխակերպել «դադարեցում» եզրույթով:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

Այսինքն, Սահմանադրությունը մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայության պարագայում ԱԺ-ին պարզամավորի լիազորությունների դադարեցման իրավասությամբ չի օժտել, այն էլ՝ որոշման միջոցով, ինչը սահմանված է ԱԺ կանոնակարգ օրենքով:

Ըստ ՄԴ որոշման՝ ԱԺ-ն պարտավոր է Կանոնակարգ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համապատասխանեցնելով Սահմանադրությանը և Դատարանի՝ որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, 99-րդ հոդվածի 4-8-րդ մասերը պետք է իրավակարգավորման այնպիսի հնարավորություն նախատեսեն, որի պայմաններում օրենքով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստն ընդունելով ի գիտություն՝ կազմվի արձանագրություն պարզամավորի լիազորություններն իրավունքի ուժով (ex jure) դադարելու վերաբերյալ:

Նկատելի է նաև, որ Սահմանադրական դատարանը, հղում կատարելով միջազգային փաստաթղթերին, նախանշել է մոտեցում, ըստ որի խորհրդարանների կանոնակարգերը հնարավորինս պետք է ձևակերպվեն այնպես, որպեսզի «...բարդացնեն պարզ մեծամասնության կողմից քաղաքական փոքրամասնության խմբերի իրավաչափ նպատակներն անտեսելու հնարավորությունը»: Այս համապատասխանեցումը, ըստ ՄԴ-ի, կբարդացնի պարզ մեծամասնության կողմից քաղաքական փոքրամասնության խմբերի կողմից իրենց սահմանած օրակարգով արտահերթ նստաշրջան կամ նիստ նախաձեռնելու իրավունքն անտեսելու հնարավորությունը:

ՄԴ որոշման քաղաքական բովանդակությունն ու հետևանքները

Գոռ Աբրահամյան

Որքան էլ տարօրինակ է, Սահմանադրական դատարանի որոշումը Ազգային ժողովի և այն կազմող քաղաքական ուժերի ուշադրությանն առանձնապես չարժանաչավ: Խորհրդարանականներն անտարբերության մատնեցին թե դիմումի քննությունը (այն քննարկվեց միայն դիմող կողմի ներկայացուցչի (Գագիկ Զհանգիրյան) և պատասխանողի (Դավիթ Հարությունյան) մասնակցությամբ), թե դատարանի կայացրած որոշումը:

Գարնանային նստաշրջանի ընթացքում ԱԺ կանոնակարգ օրենքում փոփոխություններ կատարելու որևէ նախաձեռնություն չցուցաբերեց ոչ խորհրդարանական մեծամասնությունը, և ոչ էլ ընդդիմությունը: Եթե քաղաքական մեծամասնության անշտապողականությունը կարելի է բացատրել փոքրամասնության նկատմամբ կարևոր լծակ կորցնելու անհարմարությամբ, ապա անհասկանալի է ընդդիմության անտարբերությունը, քանի որ ՄԴ որոշումը և դրան համապատասխան արվելիք նոր կանոնակարգումներն իրենց տրամաբանությամբ միտված են նրան,

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

որ ԱԺ քաղաքական մեծամասնությունը զրկվի բացակայությունների հարցը քաղաքականացնելու, իր հայեցողությամբ պարզամավորի ճակատագիրը փնտրի՞նելու լծակից:

Հայկական պառլամենտարիզմի պարմության մեջ եզակի է դեպքը, երբ պարզամավորի լիազորությունները դադարեցվել են մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից անհարգելի բացակայելու հիմքով. 2001 թ. հոկտեմբերի 9-ին Ազգային ժողովը որոշմամբ դադարեցրեց Վանո Սիրադեղյանի լիազորությունները, ինչի քաղաքական դրդապարճառն առավել քան ակնհայտ էր:

Սակայն առնվազն երկու հանգամանք անհեռանկար են դարձնում ՄԴ որոշման հնարավոր դրական ազդեցությունը: Առաջինն այն է, որ բացակայությունները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված կոնկրետ դեպքերի, հարգելի կամ անհարգելի ճանաչելու իրավասությունը շարունակում է մնալ քաղաքական մեծամասնության աջակցությունը վայելող ԱԺ նախագահին: ԱԺ կանոնակարգ օրենքի 6-րդ հոդվածի 1.1 կետը և 99-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» և «գ» ենթակետերը ԱԺ նախագահին այս հարցում սեփական հայեցողությամբ ու նախապարվությամբ առաջնորդվելու լայն հնարավորություններ են ընձեռում: Դա պարզորոշ ընդգծվեց հարկապես ՀՀ վերընտրված նախագահի պաշտոնակալության համար հրավիրված ԱԺ հարուկ նիստը ընդդիմադիր խմբակցությունների կողմից բոյկոտելուց հետո, երբ ԱԺ նախագահն անհարգելի ճանաչեց բոյկոտած 36 պարզամավորների բացակայությունը և նրանց աշխատավարձերից պահումներ արվեցին (12460-ական դրամ): Չնայած բոյկոտելու մասին հայտարարությունը չէր արվել ԱԺ քառօրյա նիստերի ընթացքում, ինչպես սահմանում է ԱԺ կանոնակարգ օրենքը, սակայն դժգոհ պարզամավորները հայտարարեցին, որ պարժամիջոցը կիրառվել է հանիրավի:

ԱԺ կանոնակարգ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ Ազգային ժողովի նիստերից, այն հանձնաժողովների, ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի նիստերից, որոնց կազմում ընդգրկված է փյալ պարզամավորը, ինչպես նաև նշված հանձնաժողովների կազմակերպած խորհրդարանական լսումներից անհարգելի բացակայած օրերի համար պարզամավորին աշխատավարձ չի վճարվում:

Պարզամավորների բացակայությունները հարգելի են համարվում «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

Համաձայն ՀՀ ԱԺ հասարակայնության և տեղեկատվության միջոցների հեղուկացման վարչության տրամադրած տեղեկանքի՝ 2013թ. մարտ-ապրիլ ամիսներին պահում է արվել Ազգային ժողովի նիստերի, հանձնաժողովների նիստերի և խորհրդարանական լսումների անհարգելի բացակայած 76 պատգամավորի աշխատավարձից՝ 2466300 դրամի չափով: «Տուգանված» պատգամավորներից 25-ը ՀՀԿ խմբակցությունից են, 28-ը՝ ԲՀԿ-ից, 7-ը ՀԱԿ-ից, 5-ը ՕԵԿ-ից, 5-ը ՀՅԴ-ից, 4-ը «Ժառանգություն» խմբակցությունից: Պահումներ արվել են նաև խմբակցություններում չընդգրկված պատգամավորներից:

Մյուս կողմից՝ պատգամավորները ՍԴ դիմել էին ոչ թե բացակայությունների հարցը քննության առնելու, այլ արտահերթ նիստ կամ նստաշրջան հրավիրելու իրենց իրավունքի իրացման սահմանափակումների սահմանադրականությունը վիճարկելու նպատակով: Բացակայությունները, որոնք կարող են հանգեցնել պատգամավորի կարգավիճակից զրկելուն, վերաբերում են ոչ թե ԱԺ լիազումար նիստերի, ԱԺ մշտական հանձնաժողովների նիստերի և խորհրդարանական լսումների մասնակցությանը, այլ՝ քվեարկություններին:

Օրենսդրական կարգավորումները հստակ տարբերակում չեն դնում քվեարկություններից ու նիստերից բացակայությունների միջև, ինչը ևս հայեցողական մոտեցում դրսևորելու դաշտ է ստեղծում: Օրինակ՝ Ազգային ժողովում խիստ արմատացած է այն պրակտիկան, երբ պատգամավորները գրանցվում են՝ քվորում ապահովելու և նիստը իրավագոր դարձնելու համար, սակայն փաստացի չեն մասնակցում նիստերին, սակայն արագ մոբիլիզացվում են օրինագծերի քվեարկությունների ժամանակ և հենց այդ նպատակով քվեարկությունները ԱԺ ղեկավարության հայեցողությամբ անցկացվում են խմբավորված: Որքանով է կարգապահական կանոնների մեջ տեղավորվում մասն աշխատակարգը: Այդ բացակայությունները համարվում են հարգելի միայն այն պատճառաբանությամբ, թե գրանցված պատգամավորները կարող են աշխատել և նիստի ընթացքին հետևել նաև աշխատասենյակներում՝ այն դեպքում, երբ նրանցից շատերն ուղղակի ֆիզիկապես ԱԺ-ում չեն գտնվում: Այդ պատճառով բազմաթիվ պատգամավորների համար ԱԺ նիստերին մասնակցությունը նույնականացվում է միայն քվեարկությանը մասնակցելուն՝ իրավաստեղծ գործունեությունը նրանց համար դարձնելով ինքնանպատակ, «կոճակ սեղմելու» մեխանիկական աշխատանք:

ԱԺ լիազումար և հանձնաժողովների նիստերից բացակայությունները գտնվում են կարգապահական կանոնների տիրույթում, որը պատժվում է ընդամենը աշխատավարձերից պահումներ անելով:

ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԱԺ-ՈՒՄ

Մինչդեռ անհարգելի բացակայութեան պատճառով խորհրդարանում ձևավորվել ու ամրապնդվել է ուրիշ փոխարեն քվեարկելու արտավոր պրակտիկա, որն առնչություն ունի պաշտոնեական կեղծիք կատարելու երևույթին և շատ ավելի ծանր զանցառություն է, քան պարզապես նիստերին չմասնակցելը:

Ակնհայտ է, որ կարգազանց պարզամտությունների նկատմամբ կարգապահական փոքրիկ կիրառումը, ինչին ձեռնամուխ է եղել ԱԺ նախագահը, ուղղված է սեփական աշխատանքային պարտականությունների նկատմամբ պարզամտությունների պատասխանատվության գիտակցության մեծացմանը, անկախ նրանից, որ նման մոտեցումը կարող է ունենալ նաև քաղաքական ենթատեքստ: Սակայն առանձին դեպքերում դժվար է ասել, թե ինչ հիմքով է ԱԺ նախագահը պարզամտությունները գնահատում հարգելի կամ անհարգելի: Օրինակ՝ որքանով են քաղաքացիների հետ հանդիպումներ ունենալու և ընդունելություններ կազմակերպելու պարզամտորի իրավունքը և ԱԺ նիստերին, հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու պարտավորությունը համադրելի: Արդյոք կարելի՞ է անհարգելի գնահատել ԱԺ նիստերից այն բացակայությունները, որոնց ընթացքում պարզամտորը հանդիպումներ է ունենում իր ընտրատարածքի ընտրողների հետ, այսինքն՝ իրականացնելով իր ի պաշտոններ կայացուցչական գործառույթը:

Եթե դրանք կարգապահական խախտումներ չեն, ապա որքանով է բացառվում այդ պատճառաբանությամբ, բայց իրականում սուբյեկտիվ նկատառումներով, անձնական բնույթի բացակայությունները հարգելի դարձնելու հնարավորությունը:

Ինչն է, ակնհայտ է, որ պարզամտությունների բացակայությունների խնդիրը, հարկապես դրանք հարգելի կամ անհարգելի ճանաչելու մասով, ԱԺ-ում հստակ կարգավորված չէ, ինչը փարբերակված, խտրական մոտեցում ցուցաբերելու լայն դաշտ է ստեղծում: Չի կարելի բացառել, որ խնդրառարկայի նկատմամբ պարզամտությունների դրսևորած ակնհայտ անտարբերությունը պայմանավորված է անհրաժեշտության դեպքում առկա անորոշությունները սեփական հայեցողությամբ մեկնաբանելու հնարավորությունը պահպանելու ցանկությամբ: Բայց նման ակնկալիքը զրկում է մյուսներին ԱԺ նախագահից անաշտություն պահանջելու բարոյական իրավունքից:

Այլընտրանքային ծառայություն

Ավերիք Իշխանյան

Հայաստանի հեղինակյան կոմիտեի նախագահ

Հայաստանում այլընտրանքային ծառայության մասին քննարկումները սկսվել են դեռևս 90-ականների կեսերից՝ իրավապաշտպանների կողմից: Երկար ժամանակ այդ հարցը քաղաքական ուժերի զգալի մասը սվիններով էր ընդունում փաստարկելով, որ՝

- երկիրը փաստացի գտնվում է պատերազմի մեջ, և բոլորը պարտավոր են ծառայել բանակում,
- օրենքի ընդունման դեպքում շարքերը կներկայանան որպես Եհովայի վկաներ և կխուսափեն զինվորական ծառայությունից:

Մինչև Եվրոպայի խորհրդին Հայաստանի անդամակցելը հարցն այդպես էլ լուրջ քննարկումների առարկա չդարձավ Ինչպես հայրնի է, ԵԽ-ին անդամակցելու կապակցությամբ Հայաստանի պարտավորություններից մեկն էլ այլընտրանքային ծառայության մասին օրենքի ընդունումն էր²:

2003 թ. դեկտեմբերին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը: 2004-ին 24 հոգի ՀՀ-ում անցան այլընտրանքային քաղաքացիական ծառայության հիվանդանոցներում, ինչպես սանիտար: Վեց ամիս անց նրանցից 23-ը հրաժարվեցին ծառայությունը շարունակելուց համարելով, որ իրենք գտնվում են պաշտպանության նախարարության հսկողության ներքո: Նույն փորում Ազգային ժողովը փոփոխություններ կատարեց օրենքում, որոնց համաձայն այլընտրանքային աշխատանքային ծառայողները ծառայության վայրը լքելու համար պարտավորվում են զինծառայողների համար նախատեսված կարգով:

Այլընտրանքային ծառայությունից հրաժարված 20 երիտասարդի դեմ քրեական գործ հարույվեց: 17-ը ձերբակալվեցին և դատապարտվեցին 2-3 տարվա ազատազրկման՝ դասալքության և ծառայության վայրը լքելու մեղադրանքով: Նրանցից 13-ը 8 ամիս, իսկ մյուսները՝ 3-6 ամիս մնացին բանտերում: 2006-ին դատախազությունը միջնորդեց դատարաններին հետ ուղարկել գործերը նախաքննության, իսկ գլխավոր դատախազությունը կարճեց դրանք՝ հանցակազմի բացակայության հիմքով:

²Անդամակցության երեք փուլերի ընթացքում ընդունել այլընտրանքային ծառայության մասին եվրոպական չափանիշներին համապատասխան օրենք և միննույն ժամանակ ներում չնորհել համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունը մերժելու պարտաճանձ ազատազրկված կամ ուղղիչ աշխատանքի դատապարտված անձանց՝ նրանց հնարավորություն ընձեռելով ընտրություն կատարել չզինված ռազմական կամ այլընտրանքային քաղաքացիական ծառայության միջև, այլընտրանքային ծառայության մասին օրենքի ուժի մեջ մտնելուց հետո: (Հայաստանի անդամակցությունը Եվրոպայի խորհրդին http://www.coe.am/index.php?cat_id=35)

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Դատախազության որոշման մեջ նշված էր, որ նրանք կարող էին դիմել դատարան նյութական փոխհատուցում ստանալու համար: Բոլոր 19 Եհովայի վկաները դիմեցին դատարան, սակայն դատական երեք արյաններն էլ մերժեցին փոխհատուցման վերաբերյալ նրանց հայցերը:

ՀՀ-ում այլևս ոչ ոք չմեկնեց այլընտրանքային քաղաքացիական ծառայության. թեև ընդունվեց «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը, սակայն այն չգործեց, իսկ համոզմունքների համար զինվորական ծառայությունից հրաժարված որևէ կալանավորի ներում չչնորհվեց:

2006-2007թթ. Հայաստանի «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքին անդրադարձան Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ ԵԽ հանձնաժողովը³ և ԵԽ 1532 բանաձևը⁴: Չնայած ԵԽ վեհաժողովի բանաձևին, ՀՀ իշխանությունները ոչ մի քայլ չձեռնարկեցին օրենքի փոփոխությունների ուղղությամբ:

2013թ.-ին «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունները հետևանք էին 2012թ. ԵԽ Մարդու իրավունքների դատարանի՝ ընդդեմ Հայաստանի կայացրած որոշումների⁵:

Ըստ այդ փոփոխությունների, այլընտրանքային ծառայության անցնելու որոշումն ընդունում է ոչ թե զինվորական կոմիսարիատը, այլ Հանրապետական հանձնաժողովը՝ կազմված Կարածքային կառավարման, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության, ոստիկանության և պաշտպանության բնագավառներում կառավարման մարմինների և ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի ոլորտները համակարգող ստորաբաժանման մեկական ներկայացուցիչներից: Զուտ զինվորականից հանձնաժողովը ձևափոխվեց խառը հանձնաժողովի, և այսպիսով օրենքով չապահովվեց հանձնաժողովի լիարժեք քաղաքացիական բնույթը: Հանձնաժողովի ապագա աշխատանքային քննարկումների դիտարկումները ցույց կտան, թե որքանով ազդեցություն կունենան ուժային կառույցների ներկայացուցիչները հանձնաժողովի մյուս անդամների վրա:

³2006 թ. Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ ԵԽ հանձնաժողովը նշում է, որ այլընտրանքային քաղաքացիական ծառայությունը, որն ավելի երկար է տևում, քան զինվորական ծառայությունը, փեղի է ունենում զինվորական վերահսկողության ներքո:

⁴2007 թ. Եվրոպայի խորհրդի ընդունած 1532 բանաձևում ասվում է. Ինչ վերաբերում է այլընտրանքային ծառայության մասին «Եվրոպական չափանիշներին համապատասխանող» օրենք ընդունելու և «համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվելու համար ազատագրված պարտի դատապարտված բոլոր անձանց ներում շնորհելու» Հայաստանի հանձնառությանը, Վեհաժողովը հիասթափությամբ է նշում, որ ներկայումս գործող օրենքը, որը փոփոխվել է 2005 թվականին և 2006 թ. հունիսին, համոզմունքների հիմնավորմամբ զինվորական ծառայությունից հրաժարվողներին մինչ օրս չի տալիս «ակնհայտորեն քաղաքացիական բնույթ ունեցող, իսկական այլընտրանքային ծառայության» որևէ երաշխիքներ, որպեսզի «ծառայության բնույթը լինի այնպիսին, որ չկանխի այդ ծառայությունն ընդրելը և չպարունակի պարտի տարրեր», ինչպես նախատեսված է Եվրոպայի խորհրդի չափանիշներով: Վեհաժողովը խորապես նրախոգված է այն հանգամանքով, որ իսկական քաղաքացիական ծառայություն չլինելու պարզաբանումը փաստյալ անձինք, ովքեր համոզմունքների հիմնավորմամբ հրաժարվում են զինվորական ծառայությունից, ընդ որում՝ նրանց մեծ մասը Եհովայի վկաներ են, շարունակում են մնալ բանտարկված, քանի որ նախընտրում են բանտը իրապես քաղաքացիական բնույթ չունեցող այլընտրանքային ծառայությանը: Վեհաժողովը Հայաստանի իշխանություններին կոչ է անում Եվրոպայի խորհրդի՝ ներկայումս փյալ խնդիրն ուսումնասիրող փորձագետների առաջարկությունների հիման վրա վերանայել «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքը և այդ ընթացքում ներում շնորհել ներկայումս ազատագրվածներին արտաքին պարտի կրող այն երիտասարդներին, ովքեր համոզմունքների հիմնավորմամբ հրաժարվում են զինվորական ծառայությունից:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Վերջին փոփոխություններով նախատեսվում է, որ Հանրապետական հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել կրոնագետներ, հոգեբաններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, այլ անձինք: Հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության ապահովումը հայեցողական է, քանի որ օրենքով փոփոխվել է «կարող են հրավիրվել» սահմանումը «կարող են ներկա լինել»-ի փոխարեն:

Կրճատվել է այլընտրանքային աշխատանքային ծառայության ժամկետը՝ 48 ամսից դառնալով 36: Ժամկետի մեկ տարով կրճատումը դրական փոփոխություն է, բայց համեմատելով ժամկետային զինվորական ծառայության (24 ամիս) հետ, 36 ամիսը, կարծում ենք, համաչափ ժամկետ է:

Փոփոխություններով սահմանվում է նաև հանրապետական հանձնաժողովի որոշումներ ընդունելու կարգը՝ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների 2/3-ով: Հարց է առաջանում, եթե ներկայացված դիմումը և համապատասխան փաստաթղթերը բավարարում են այլընտրանքային ծառայության անցնելու պահանջներին, ի՞նչ այլ քննարկումներ և քվեարկություններ են ընթանալու: Չե՞ն վերածվի արդյոք քննարկումները հավաքաքննության և «դաստիարակչական» աշխատանքների:

Այլընտրանքային աշխատանքային ծառայողին փոխելու է ամսական դրամական բավարարում մինչև 30 հազար դրամի չափով:

Հետաքրքրական է աշխատավարձի փոխարեն «դրամական բավարարում» ձևակերպումը: Օրենքի «այլընտրանքային աշխատանքային ծառայություն» անվանումից հետևում է, որ ծառայության անցածներն աշխատողներ են, հետևաբար պետք է վարձավորվեն՝ ստանան աշխատավարձ նվազագույնը 32 հազար 500 դրամի չափով: «Դրամական բավարարում» բառակապակցությամբ սահմանվում է աշխատանքի դիմաց փոխհատուցման վերին շեմը, որն ավելի ցածր է Հայաստանում սահմանված նվազագույն աշխատավարձից:

⁵2012 թ. ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության անդամների զանգվածների վերաբերյալ մի քանի վճիռներ է կայացրել ընդդեմ Հայաստանի Հանրապետության: «Բուխարապոյան ընդդեմ Հայաստանի» և «Ծափուրյան ընդդեմ Հայաստանի» գործերով կայացված վճիռների համաձայն՝ Հայաստանը պարտավոր է նրանցից յուրաքանչյուրին վճարել 10.000-ական եվրո: Հիշյալ անձինք դատապարտվել էին ազատագրված ժամկետային զինվորական ծառայությունից հրաժարվելու համար: Այդ գործերով ՄԻԵԴ-ը ճանաչել էր Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 9-րդ հոդվածի խախտում (մտքի, խղճի և կրոնի ազատություն): 2012 թ. նոյեմբերի 27-ին «Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բավարարել է 17 Եհովայի վկաների դիմումը: Հիշյալ վճիռի համաձայն՝ Հայաստանը նրանց պետք է վճարի 6000-ական եվրո, ինչպես նաև ընդհանուր դատական ծախսերի համար՝ 10.000 եվրո, ընդհանուր առմամբ՝ 112.000 եվրո:

Նախատեսվում է, որ այլընտրանքային ծառայության ժամկետը նվազեցվում է անձի՝ քրեական պատիժ կրելու կամ քրեական հետապնդման ենթարկվելու հետևանքով անազատության մեջ գտնվելու ժամկետով: Փաստորեն՝ ազատագրվումը նույնացվում է այլընտրանքային ծառայությանը: Հարց է առաջանում, եթե ազատագրվածը դատապարտվել է 2,5 տարվա ազատազրկման, պատիժը կրելուն մնացել է մեկ ամիս, ապա այլընտրանքային ծառայության անցնելու դիմում գրելու դեպքում մեկ տարի՞ էլ պետք է ծառայության անցնի: Ի՞նչ կնախընտրի անձը՝ մեկ ամիս ևս անցկացնել ՔԿՀ-ում և ազատության մեջ լինել, թե՞ անցնել այլընտրանքային ծառայության և ևս մեկ տարի ծառայել: Տրամաբանական կլինե՞ր ազատազրկման երկու օրը հաշվել ծառայության մեկ օր:

Դրական պետք է գնահատել փոփոխությունը, որի համաձայն «այլընտրանքային ծառայության նկատմամբ չի կարող սահմանվել զինվորական վերահսկողություն», ինչպես նաև դրույթը, որով հանվել է սահմանված ձևի արտահագուստ կրելու պարտադրանքը:

ՀՀ կառավարության 2012թ. և 2013թ. ծրագրերի հիմնական տրամաբանությունը և համեմատական վերլուծությունը

Վիլեն Խաչատրյան տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ՀՀ կառավարությունը 2012- ի խորհրդարանական եւ 2013- ի նախագահական ընտրություններից եւ վերաձևավորվելուց հետո ներկայացրեց երկու ծրագիր: 2012թ.-ի և 2013թ.-ի ՀՀ կառավարության ծրագրերի միջև այդքան կարճ ժամանակահատվածում դժվար թե ի հայտ գային լուրջ առարկայական տեղաշարժեր և փոփոխություններ: Բնական է, որ 2013թ.-ի ծրագիրը պետք է լինե՞ր 2012թ.-ի տրամաբանական շարունակությունը և իր մեջ ունենար գրեթե նույն գաղափարական հենքը՝ բացառությամբ համաշխարհային տնտեսական որոշ մարտահրավերների, որոնք հնարավորություն տվեցին մեկ տարվա կտրվածքով շրկումներ մտցնել դրված ծրագրային դրույթների մեջ՝ հաշվի առնելով հնարավոր զարգացումները: Մյուս կողմից, էական փոփոխության չէր ենթարկվել նաև ՀՀ կառավարության կազմը, որը ևս ենթադրում էր ՀՀ կառավարության նախկինում ընտրված նպատակների, համեմայն դեպս, ոչ էական փոփոխություն:

Կարելի է փաստել, որ ՀՀ կառավարության 2012 և 2013թթ. ծրագրերի գաղափարախոսական հենքը նույնն է և հիմնվում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության, ՀՀ նախագահի, Հայաստանի հանրապետական և «Օրինաչեղիք» կուսակցությունների նախընտրական ծրագրերի հիմնական դրույթների⁶ և դրանց համադրելի գաղափարների վրա: Կառուցվածքային տեսանկյունից որոշակի փոփոխություններ առկա են 2013թ.-ի ծրագրում, այն է՝ 3.1 հատվածում՝ «Անվտանգ և ապահով Հայաստան» և 3.3 հատվածում՝ «Ազատ և արդար Հայաստան», իսկ մնացած հատվածներում գրեթե նույնությամբ կամ որոշ վերնագրային տեղաշարժերով պահպանված է 2012թ.-ի ՀՀ կառավարության ծրագրի տրամաբանական կառուցվածքը:

Ծրագրի նկարագրությունը

ՀՀ կառավարության 2013թ.-ի ծրագիրը կազմված է 5 հիմնական հատվածներից՝ նախաբանից, ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղղություններից, ՀՀ կառավարության գործունեությունից ակնկալվող հիմնական արդյունքներից, ՀՀ կառավարության գործունեության ոլորտային ծրագրերից և ՀՀ կառավարության ծրագրերի իրագործման արտաքին ռիսկերից: Ներածությունում ներկայացված են այն հիմնական փոփոխությունները և ակնկալիքները, որոնք սպասվում են ՀՀ կառավարության 2013թ. ծրագրի իրականացման արդյունքում:

ՀՀ կառավարության գործունեության հիմնական ուղղություններ բաժնում ներկայացված են 5 հիմնական ուղղություններ՝

- անվտանգ և ապահով Հայաստան,
- աշխարհաբնի համապատասխան արդարացի վարձապարտություն ապահովող աշխատատեղերի ստեղծում,
- ազատ և արդար Հայաստան,
- մարդկային կապիտալ,
- ինստիտուցիոնալ զարգացում:

⁶ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառավարության 16 մայիսի 2013թ., N 515-Ա որոշում, էջ 2:

ՀՀ կառավարության գործունեությունից ակնկալվող հիմնական արդյունքները հափվածն այն մասն է, որպեսզի հստակ նշված են մինչև 2018թ.-ը դրված հիմնական նպատակային կետերը և այսպես առաջին հերթին 10 կետերով ներկայացված են հիմնական արդյունքային ցուցանիշները, որոնց իրադրականության հարցերին կանդիդատները հետագա շարադրանքում: Սա նաև այն բաժինն է, որպեսզի առկա են արդյունքային թվային փոխանցումներ, իսկ մյուս բաժիններում թվային փոխանցումները գրեթե բացակայում են:

Ծրագրի վերջին հափվածում փոփոխվեց ՀՀ կառավարության ծրագրերի իրագործման արտաքին ռիսկերը, այն հնարավոր սպառնալիքները, որոնք կարող են նվազեցնել ծրագրի կատարման հավանականությունը կամ կատարողականի փոփոխությունը:

Ծրագրի թիրախները, նպատակներն ու ակնկալվող ցուցանիշները

Ակնկալվում է, որ առաջիկա 5 տարիներին տարեկան ունենալու ենք 5-7% ՀՆԱ-ի աճ: Տարբեր փորձագիտական գնահատականներով՝ Հայաստանի ՀՆԱ-ի ներուժը գտնվում է հենց այս միջակայքում, այսինքն՝ այսպես ոչ թե դրված է բարձր, այլ միջին տեմպերով աճ ապահովելու գաղափարը, իսկ դրանից բարձր ակնկալիքներն արդեն կա՛մ կտեղավորվեն լավատեսական սցենարի շրջանակներում, կամ հնարավոր կլինեն ապահովել տնտեսության առաջանցիկ զարգացում հաղորդելու դեպքում: Չնայած պետք է նշել, որ համաշխարհային տնտեսության բացասական զարգացումները որոշ տարիների կտրիպեն զարգանալ 5%-անոց սփորին շեմով, այլ ոչ թե հասնելով 7% ՀՆԱ-ի աճի:

Ինչ վերաբերում է ներմուծման նկատմամբ առաջանցիկ աճի տեմպերի ապահովմանը, ապա այս միտումն արդեն իսկ նկատելի է, անհրաժեշտ է միայն պահպանել քաղաքականության շարունակականությունը: Մյուս կողմից՝ դրամի որոշակի արժեզրկումը ևս խթանող ազդեցություն է թողնում արտահանման քաղաքականության վրա, և այս միտումը շարունակվելու է, քանի որ համաշխարհային տնտեսության մեջ, ըստ Բազելյան սցենարի, երկարաժամկետ փոփոխությունները բարձրանում են: Այսինքն՝ աշխարհում սկսվում է թանկ փողեքի ժամանակահատվածը, իսկ դա նշանակում է շրջանառության մեջ դոլարի ծավալի նվազում, համապատասխանաբար՝ ՀՀ դրամի արժեզրկում, եթե, իհարկե, ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի կողմից այս 5 տարիների ընթացքում չիրականացվի քանակական մեղմման (QE 4) քաղաքականություն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Նվազագույն աշխատավարձի կրկնապատկումը, ինչպես նաև վերջինիս աղքատության գծի համեմատ առնվազն 140% մակարդակի ապահովումը ևս իրադրության է, քանի որ, եթե առաջիկա 5 փարիների ընթացքում ինֆլյացիայի մակարդակը փոխվի 4-5%-ով, ապա իրական նվազագույն աշխատավարձերի աճն այնքան էլ մեծ չի լինելու և փոքրագույն առումով 100% աճի մոտ 30%-ը լինելու է ինֆլյացիոն բաղադրիչի հաշվին: Սակայն նվազագույն աշխատավարձի բարձրացումն իր հետ կբերի նաև աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռության կետի դեպի վեր տեղաշարժման, որն իր մեջ գործազրկության ռիսկեր է պարունակում, այսինքն՝ գործափուն ոչ թե բոլոր աշխատողների աշխատավարձերի բարձրացում է ապահովելու այլ կա՛մ ցածր աշխատավարձով երկու աշխատողներից պահելու է մեկին, կա՛մ պարզապես փորձելու է գործել սրվերային դաշտում՝ ունենալով չգրանցված աշխատողներ:

Ինչ վերաբերում է ծնելիության գումարային գործակցի մինչև 1.8 աճին, ապա այստեղ կան որոշակի վերապահումներ, քանի որ առանց արտագաղթի խնդրի կանխման վերջինս դժվար կլինի ապահովել, մյուս կողմից ծնելիության խթանման սույիալական քաղաքականության շրջանակներում գույե հնարավոր լինի հասնել այս ցուցանիշին: Աղքատության կրճատման առումով նախատեսվում է առաջիկա 5 փարիների ընթացքում ունենալ 8-10%-ի հասնող կրճատում, որը եթե բաժանում ենք փարիների, ապա փարեկան կազմում է 1.6-2%, այն հնարավոր կլինի ապահովել, եթե ՀՀ կառավարությունը կարողանա հասնել 5-7%-անոց ՀՆԱ-ի աճի և ճիշտ մեխանիզմների միջոցով իրագործվի արդյունավետ վերաբաշխման քաղաքականություն: Այս քաղաքականության փրամաբանական շարունակությունն է նաև 100 հազար նոր աշխատատեղերի ստեղծումը: Իհարկե, փարեկան կտրվածքով այն կկազմի 20 հազար նոր աշխատատեղեր, սակայն դա նշանակում է, որ ՀՀ-ում պետք է կանխվի արտագաղթը, ավելանա փոքրագույն աշխատատեղերը, կրճատվի գործազրկության մակարդակը, իսկ փոքրագույն մեջ զբաղվածների տեսակարար կշիռը մոտենա 1.3 մլն մարդու, որը խիստ լավատեսական սցենար է և շատ դժվար իրագործելի, քանի որ «եթե-ները» բավականին շատ են:

Պետական եկամուտների հավաքագրման մակարդակի աճի ապահովումը ՀՆԱ-ի նկատմամբ փարեկան 0.3-0.4 փոկոսային կետի չափով ևս իրագործելի է, քանի որ 5 փարիների ընթացքում այն կկազմի ընդամենը 1.5-2%: ՀՀ կառավարության ծրագրում նշվում է նաև, որ դա կարվի հիմնականում սրվերային փոքրագույն ծավալների կրճատման հաշվի, իսկ դա նշանակում է 5 փարվա կտրվածքով ընդամենը 2% սրվերի կրճատում, որն իրատեսական է սրվերային փոքրագույն շատ փոքր տեսակարար կշռի կրճատման առումով:

Եթե փորձենք գնահատել ՀՀ կառավարության 2013թ. ծրագրի կատարման իրադրությանը, ապա պետք է նշել, որ շատ դեպքերում բացակայում են կոնկրետ թվային փոխանցումները, որոնց հիման վրա հնարավոր է գնահատել յուրաքանչյուր ծրագրի կատարման հնարավորությունը: Մյուս կողմից, դրված ծրագրային ցուցանիշներն այնքան էլ ամփիպիոզ չեն և զուսպ են, որի պարագայում դրանց կատարման իրադրությանը և հավանականությունն ավելի բարձր է: Իհարկե, պետք է նշել, որ համաշխարհային փոփոխության մեջ այնքան էլ նպաստավոր և զարգացման բարձր տեմպերի ժամանակներ չեն, որը և ստիպում է որոշակի առումով վերապահումներով մոտենալ ՀՀ կառավարության ծրագրի կատարման իրադրությանը, սակայն պետք է նաև պատրաստ լինել արտաքին փոփոխական բացասական ցնցումների պարագայում ևս ապահովել բարձր կատարողական:

ՀՀ կառավարության 2013թ. ծրագրային դրույթներից հնարավոր շեղումներն արդեն իսկ որոշակի սցենարներով ներկայացված են ծրագրի վերջում, որոնց իրականանալու պարագայում արդյունքային ցուցանիշների կանխատեսումները փոփոխության կենթարկվեն: Հարցը նրանում է, որ ծրագրային ցուցանիշների չկատարման ներքին ռիսկերի մասին ծրագրում չի խոսվում, այսինքն՝ մենք գործ ունենք միայն արտաքին շուկերի ներմուծման և համաշխարհային փոփոխության և հարևան երկրների փոփոխությունների հնարավոր բացասական զարգացումների հետ: Մյուս կողմից համաշխարհային փոփոխական աճի ՀՀ փոփոխության վրա բացասական դրսևորումներից 3-րդ կետն արդեն իսկ կարելի է համարել իրականություն, քանի որ էներգակիրների գների աճն արդեն իսկ որոշակի առումով զսպող ազդեցություն կունենա ՀՆԱ-ի աճի վրա:

Մյուս երկու ազդեցության ուղղությունները զուտ փոփոխական տեսանկյունից կապված են վճարային հաշվեկշռի ուղով, այն է՝ արտահանման և ներմուծման գնային գործոններով պայմանավորված փոփոխական շուկի փոխանցմամբ, և երկրորդը՝ կապիտալ ներդրումների և փրանսֆերտների ծավալների կրճատմամբ: Իհարկե, վերջիններիս կանխարգելմանն ուղղված փոփոխական քաղաքականություն է հարկավոր իրականացնել, սակայն ՀՀ կառավարության 2013թ.-ի ծրագրում արտաքին փոփոխական ցնցումներին ուղղված հակաճգնաժամային կամ կանխարգելիչ միջոցառումների հարվածը թերի է, սակայն կա առաջընթաց, որ 2008թ.-ին ի հայտ եկած և 2009թ.-ին ծանր հետևանքներով արտահայտված ֆինանսափոփոխական ճգնաժամը ցույց տվեց, որ Հայաստանը պետք է պատրաստ լինի ճգնաժամային զարգացումներին և կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկի՝ բացառելով ճգնաժամի հնարավոր շրջանցումը: Այսպիսով՝ կարելի է նաև մանրամասն քննարկել ՀՀ կառավարության 2013թ.-ի ծրագրի ոլորտային յուրաքանչյուր ուղղությունը, ինչպես նաև դրանց իրագործելիության հնարավորությունները, սակայն պետք է նշել, որ դրանք ձևակերպված են նպատակների տեսքով և կոնկրետ խնդիրների

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

վերածվելու ու նպատակներին հասնելու խնդիրների հիերարխիկ բուրգը պարկերացնելով է հնարավոր դրանց մասին իրապեսական հետևություններ անել:

Այդ իսկ պարճառով պետք է պարզապես հավատալ, որ ՀՀ կառավարության ծրագրային նպատակների իրագործումը հնարավոր կլինի ապահովել առաջիկա 5 տարիների ընթացքում և դրանք չեն մնա թղթի վրա կամ բարի ցանկությունների շրջանակներում:

Ծրագրային բյուջեարվորում. փորձագիտական

Վիլեն Խաչատրյան Կրթնապահության թեկնածու, դոցենտ

2013- ի մայիսին «Հայաստանի Հանրապետության բյուջեարային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված լուրջ փոփոխություններն ու լրացումները եւ սրա հետ մեկտեղ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքում արված փոփոխություններն ամբողջացրեցին ծրագրային բյուջեարվորման անցնելու իրավական հիմքերը: Բազմիցս խոսվել է ծրագրային բյուջեարվորման առավելության մասին. այն բյուջեն որպես փաստաթուղթ դարձնում է առավել նպատակային, ինչպես նաև կապ է ստեղծվում ծախսված միջոցների և դրված նպատակների ու սրացված արդյունքների միջև: Իհարկե, բյուջեարային գործընթացը միայն համակարգի ներդրմամբ արդյունավետ չի դառնում, քանի որ կան մի շարք այլ չափանիշներ ևս:

Համաշխարհային պրակտիկայում լայն կիրառություն ունի Բյուջեի «բացության» (թափանցիկության) համաթիվը (Open budget index)⁸ : 2002 թվականից այս համաթիվը միջազգային ծրագրի շրջանակներում հաշվարկվում է մոտ 100 երկրների համար: Այն նպատակ ունի բացահայտել յուրաքանչյուր երկրի բյուջեարային գործընթացներին հասարակության մասնակցության և տեղեկացվածության աստիճանը: Դրա համար կազմված է 123 հարցից բաղկացած հարցաթերթ. 91 հարցն առնչվում է բյուջեարային գործընթացների ամեն փուլի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիությանը, 32 հարցը՝ բյուջեարային գործընթացներում հանրային մասնակցությանը և գործադիր իշխանության մարմիններին պատասխանատվության կանչելու հարցում հիմնական վերահսկողական մարմինների հնարավորությանը: Աշխարհում այս համաթիվը երեք առաջատարներն են Նոր Զելանդիան (93 միավոր), Հարավ Աֆրիկյան Հանրապետությունը (90 միավոր) և Միացյալ Թագավորությունը (88 միավոր):

⁷ «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ 2001.09.01/29(161):
⁸ <http://internationalbudget.org/what-we-do/open-budget-survey/>

Ցավոք, Հայաստանն այս համաթվում չկա, հակառակ պարագայում բավականին արդյունավետ կլիներ նաև գնահատել Հայաստանի դիրքային փոփոխությունները ծրագրային բյուջեարվորման համակարգին անցնելուց հետո: Ծրագրային բյուջեարվորման առավելությունների և թերությունների վերլուծությունից կարելի է անել որոշակի հետևություններ:

Ծրագրային բյուջեարվորման առավելությունն առաջին հերթին կապված է ծախսերի պլանավորման հստակության հետ, քանի որ ծրագրային միջոցառումներից շեղումները կամ միջոցների կամայական տնօրինման հնարավորությունները հասցվում են նվազագույնի, արդյուն-քում բարձրանում է ծրագրի կատարման արդյունավետությունը: Պետք է նշել, որ դա նաև բերում է պետական ֆինանսական կառավարման բարելավման, քանի որ ծախսման կրկնակի ստանդարտներ չեն գործում: Առավել-ություններից կարևոր է նշել նաև կատարողականի ճշգրիտ գնահատումը և գործընթացի թափանցիկությունը: Իհարկե, բյուջեարային գործընթացի կա-րևորագույն սկզբունքներից է թափանցիկությունը, սակայն այս նոր մոդելի կիրառմամբ ծախսերի տեսակարար կշիռն ավելի ակնհայտ է դառնում:

Ծրագրային բյուջեարվորման թերություններից պետք է նշել այն, որ համակարգի ներդրումը բավականին աշխատատար ու ժամանակատար է, քանի որ անհրաժեշտություն է առաջանալու բոլոր ոլորտներում առանձին միջոցառումները խմբավորել, իսկ դրանից հետո դրանք վերածել առանձին ծրագրերի:

Սա մի գործընթաց է, որի ժամանակ ցանկացած բյուջեարային հիմնարկի առաջ հստակ կետավորված ծրագրեր ունենալու խնդիր է դրվելու, այսինքն՝ ամբողջ ֆինանսական գործունեությունը կանոնակարգվելու է առանձին ծրագրերից ելնելով: Իհարկե, այսպեղ առաջանալու է տնտեսագիտական դասակարգմամբ տող առ տող բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության թուլացման խնդիր, սակայն բոլոր դեպքերում արդյունավետ վերահսկողության պարագայում նմանատիպ խնդիրներից կարելի է մեծամասամբ խուսափել:

Բաժանելով պետական ծախսերի կառավարման արդյունավետության հետ կապված հարցերը մակրո և միկրո մակարդակների՝ նկատում ենք, որ «Հայաստանի Հանրապետության բյուջեարային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով ինստիտուցիոնալ կամ մակրո մակարդակում խնդիրը ստանում է իր կարգավորումը, սակայն միկրո մակարդակում խնդիրներն ավելի շատ են և սուբյեկտիվ, քանի որ վերջնարդյունքում բյուջեարային միջոցներից օգտվող յուրաքանչյուր մարմնի ֆինանսական կառավարման գրագիտությունից է կախված հանրագումարային պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Ծրագրային բյուջեարավորման արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է նաև մշակել նորմատիվների և չափանիշների հստակ գործող համակարգ, որը կարելի է ասել առաջնային անհրաժեշտություն է:

Վերջինի բացակայության պարագայում համակարգն արդյունավետ գործել չի կարող, իսկ հստակ սահմանված ծախսային նորմատիվները յուրահատուկ կերպով նաև համահարթեցում են ապահովում, որն առավել վերահսկելի է դարձնում բյուջեի կադարումը: Սակայն պետք է նշել, որ դրա համար անհրաժեշտ է որոշակի ժամանակ, և հենց դրանով է պայմանավորված, որ ՀՀ կառավարությունը բյուջեարավորման նոր մոդելին անցման համար նախատեսում է որոշակի փուլեր, այն է՝ մասնակիորեն անցում կատարել 2016թ.-ին, իսկ ամբողջությամբ՝ 2018թ.-ից: Իհարկե, հաշվի առնելով ծրագրային բյուջեարավորման առավելությունները՝ պետք է այս գործընթացը հնարավորինս արագացնել, սակայն գործընթացի արագացման հետ մեկտեղ պետք է նաև չփոփոխել համակարգի ներդրման արդյունավետությունը: Այսպես կարելի է կիրառել հետևյալ մոտեցումը՝ փորձել առավել սեղմ ժամկետներում անցնել ծրագրային բյուջեարավորման, իսկ նախատեսված 5 տարի ժամանակահատվածը, պարզապես, առավել արդյունավետ օգտագործել և շփոթել այդ ընթացքում առաջացած թերությունները:

Այսպիսով՝ անցումը ծրագրային բյուջեարավորման համակարգին ունի և՛ առավելություններ, և՛ թերություններ, սակայն այս օրենսդրական բարեփոխումն իր նպատակակետին հասցնելու համար անհրաժեշտություն կա լինել ավելի հետևողական և ապահովել վերջինիս արագ և արդյունավետ կիրառումը:

Մյուս կողմից՝ պետք է հասնել ավելի գիտակցված ֆինանսական կառավարման մեխանիզմների ներդրման: Համաշխարհային պրակտիկայում, բացի բյուջեարային համակարգում կիրառվող Բյուջեի բացության (թափանցիկության) համաթվից (Open budget index) մեծ կիրառություն ունի նաև Ֆինանսական զարգացվածության համաթիվը (Financial Development Index)⁹ : Պետք է նշել, որ պետական հատվածը բոլոր դեպքերում աշխատում է նաև մասնավոր հատվածի հետ համագործակցելով և խնդիրն այսպես փոխադրվում է նաև բյուջեարային հիմնարկների հետ գործ ունեցող մասնավոր կազմակերպությունների դաշտ: Այսինքն՝ բյուջեարային գործընթացի, ինչպես նաև ամբողջ պետական ֆինանսական համակարգի կառավարման արդյունավետությունը պետք է դիտարկել երկրի ֆինանսական համակարգի զարգացման խնդրի լուծման համարեքսպում:

⁹ Ֆինանսական զարգացվածության համաթիվը հաշվարկվում է Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից, որը փորձում է համապատասխան մեթոդաբանությամբ գնահատական տալ երկրների ֆինանսների կառավարման առանձին ոլորտների զարգացվածության վերաբերյալ: Համաթիվը բաղկացած է 7 հիմնայուններից, որոնք խմբավորված են երեք խմբերում:

Լիցենզավորման հիմնահարցերի տրամաբանությունը և վերլուծությունը

Վիլեն Խաչատրյան Կրթության գիտության թեկնածու, դոցենտ

Էներգետիկա և ջրօգտագործում. այս ոլորտներին են առնչվում ԱԺ-ի կողմից իրականացված օրենսդրական փոփոխությունները լիցենզավորման ասպարեզում: Լիցենզիաների կրճատումները հանրային ծառայությունների այս ոլորտներում վերաբերում էին «Էլեկտրական կայանների կառուցման և վերականգնման», «Զերմային կայանների կառուցման և վերականգնման», ինչպես նաև այս ոլորտներում «փոխադրման, հաղորդման և բաշխման ցանցի կառուցման» հետ կապված ընթացակարգերին: Փոփոխություններ իրականացեցին «Լիցենզավորման մասին»¹⁰, «Էներգետիկայի մասին»¹¹, «Պետական փուլքի մասին»¹² ՀՀ օրենքներում և «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում»¹³ և այլն:

Լիցենզավորման հետ կապված հարցերը հարկ է դիտարկել գործարարությամբ զբաղվելու տեսանկյունից, քանի որ վերոնշյալ երկու ոլորտներում ՀՀ-ում առկա են որոշակի թույլ դիրքեր, հատկապես, էլեկտրական ցանցերի միանալու առումով: Եթե փորձենք հիմնավորել և գնահատական տալ, թե ինչու լիցենզավորումից ազատվեցին այս ոլորտները, ապա պետք է խնդիր դիտարկենք Համաշխարհային բանկի կողմից յուրաքանչյուր տարի հրատարակվող “Doing Business” զեկույցում ներկայացվող երկու ցուցանիշներով՝ լիցենզիաների հետ կապված գործարքների իրականացման արագությամբ և էլեկտրական ցանցերին միացմամբ:

Ձեռնարկատիրական գործունեության վարման ազատության համաթվում լիցենզավորման գործընթացների հետ կապված Հայաստանը 185 երկրների շարքում գտնվում է 46-րդ տեղում: ԱՊՀ երկրների շարքում առաջատար դիրքեր են գրավում Վրաստանը, Բելառուսը և Ղազախստանը:

Լիցենզավորման գործընթացը կատարելագործելու համար Հայաստանում լիցենզիաների տրամադրման գործառույթը պետք է նախարարություններից փոխանցվի համապատասխան տեսչություններին: Այս համապետքստում լիցենզավորման գործընթացները պարզեցնող ընթացակարգերի թիվը, դրանց վրա ծախսվող օրերի քանակը նվազեցնող ցանկացած օրենսդրական փոփոխություն նպաստում է գործարար միջավայրի բարելավմանը:

¹⁰«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2001.08.08/26(158):

¹¹«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք ՀՀ ՊՏ 2001.03.22/10(142):

¹²«Պետական փուլքի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 1998.01.11/1:

¹³«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրք» ՀՀ ՊՏ 2003.05.02/25(260):

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Այսինքն՝ եթե 30 օր փակվելուց ունեցող լիցենզավորման գործընթացը հասցվել է 23-ի, ապա դա արդեն իսկ լուրջ առաջընթաց է, իսկ եթե նախատեսվում է նաև կատարելագործել բարդ լիցենզավորման ընթացակարգը, ապա վերջինս լուրջ առաջընթաց կապահովի ՀՀ-ում իրականացվող լիցենզիաների փորձարկման համակարգում: Այսինքն՝ պետք է հետևողականորեն կատարելագործել լիցենզիաների փորձարկման ողջ գործընթացը, սակայն ոչ մատուցվող ծառայությունների որակի հաշվին:

Աղյուսակ 1

Ձեռնարկությունների լիցենզավորման գործընթացը 2013թ.¹⁴

	Լիցենզավորման գործընթաց		
	Գործընթացներ (ընթացակարգեր)	Ժամանակ (օրեր)	Ծախսեր
Երկրներ	(թիվը)	(օրեր)	(ՀԱԵ 1 շնչի հաշվով, %)
Հայաստան	17	77	50.1
Ադրբեջան	28	212	292.4
Բելառուս	12	130	24.8
Էստոնիա	13	148	16.1
Վրաստան	9	74	17.7
Ղազախստան	32	189	103.5
Ղրղզստան	12	142	140.6
Լատվիա	21	203	18.6
Լիտվա	15	142	22.3
Ռուսաստանի Դաշնություն	42	344	129.2
Տաջիկստան	24	228	638.5
Ուկրաինա	20	375	1,262.60
Ուզբեկստան	25	243	60.7

¹⁴ Աղբյուրը՝ Doing Business 2013 database, www.doingbusiness.org.

Ձեռնարկությունների լիցենզավորման ԱՊՀ փորձը ցույց է տալիս, որ Հայաստանը դեռևս բավականին անելիքներ ունի գործընթացների կրճատման առումով, և ցանկալի կլինի այս վարկանիշով առաջ անցնել Վրաստանից, քանի որ այն ՀՀ-ի համար գործարարության ոլորտում լուրջ մրցակից հարևան է: Մյուս կողմից՝ անկախ այն հանգամանքից, որ ՀՀ-ում լիցենզավորման գործընթացների ընթացակարգային մասն ավելի շար է (17), այնուամենայնիվ դրանց վրա ծախսվող ժամանակի առումով ԱՊՀ երկրների շարքում մենք զիջում ենք միայն Վրաստանին (3 օրով), որտեղ այս ցուցանիշը կազմում է 74 օր, սակայն հնարավոր է, որ վերջին օրենսդրական փոփոխություններից հետո ՀՀ-ում լիցենզավորման գործընթացի վրա ծախսվող օրերի թիվը հասնի 70-ի: Կարելի է կրճատել նաև այս գործընթացների վրա ծախսվող դրամական միջոցները ևս, քանի որ Բալթյան երկրների և Վրաստանի ցուցանիշներից ակնհայտ է դառնում, որ դրանք կարելի է կրճատել առնվազն երեք անգամ:

Լիցենզիաների տրամադրումը հիմնականում նպատակաուղղված է ծառայությունների որակի ապահովմանը, այսինքն՝ անորակ ծառայություններ մատուցելու պարագայում պատկան մարմինները կարող են զրկել լիցենզիայից կամ այն կասեցնել մինչև խնդրի շտկումը: Այս տեսանկյունից լիցենզիաների տրամադրման և կոնկրետ ոլորտում լիցենզավորված գործունեություն ծավալել կամ չծավալելը չպետք է ազդեն մատուցվող ծառայությունների և արդյունքային ցուցանիշների վրա:

Լիցենզիաների վերացման հնարավոր բացասական ազդեցությունը կարելի է նվազագույնի հասցնել վերահսկելով ոչ թե գործունեություն ծավալելը կամ չծավալելը, այլ վերջնական արդյունքները: Հնարավոր շեղումների դեպքում կիրառվում են տույժեր և տուգանքներ՝ բոլորի համար ապահովելով տվյալ ոլորտի մուտք գործելու ազատ հնարավորություններ: Իհարկե՝ այն սուբյեկտները, որոնք ունեն լիցենզիաներ կամ ձեռք են բերել դրանք որոշակի բարդություններով, բնականաբար, դեմ կլինեն լիցենզիաների չտրամադրմանը կամ կպահանջեն որոշակի փոխհատուցում, սակայն դա բնական է, որը բխում է գործունեություն իրականացնողի, բայց ոչ սպառողի շահերից, որը բազմաթիվ մրցակիցների պարագայում պետք է ստանա ավելի որակյալ ծառայություն:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ | ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանում բավականին լուրջ է դրված նաև էլեկտրական ցանցերին միանալու խնդիրը: Այս ցուցանիշով Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 101-րդ տեղը 185 երկրների շարքում: Էլեկտրական ցանցերին միացման համար նախատեսված են 5 գործընթացներ, և վերջինիս վրա ծախսվում է բավականին երկար ժամանակ (միացման համար 242 օր), և այն ծախսերի տեսքով (ՀԱԵ 1 շնչի հաշվով, %) կազմում է 107.3%: Սա փաստում է, որ գործընթացները կազմակերպվում են բավականին դանդաղ, որը ոչ կազմակերպված գործելու արդյունք է: Պետք է ձգտել այս ցուցանիշով ևս բարելավել գործարարությանը զբաղվելու դիրքերը:

Այսպիսով՝ խնդիրները, որոնք առկա են էլեկտրական ցանցերին, ջրագծերին և ընդհանրապես տարբեր ցանցերին միանալու համար, պետք է փորձել ճիշտ մոտեցումներով կարգավորել, քանի որ երբ այդ ընթացքում գործարարությանը խոչընդոտող հանգամանքներին ավելանում են նաև լիցենզավորման ընթացակարգերի հետ կապված խնդիրներ, դրանք բացասական հետևանքներն են թողնում ներդրումային միջավայրի, ինչպես նաև երկրի գործարարության վարկանիշի վրա: Սրանք բյուրոկրատական գործընթացներ են, որոնք չեն բխում գործարարների շահերից, և վերջիններն ամեն կերպ փորձում են դրանք հասցնել նվազագույնի: Սա գիտակցում են նաև տարբեր երկրների կառավարությունները, քանի որ նման խոչընդոտների պարագայում կապիտալի ներհոսք և ներդրումներ ակնկալվելն այնքան էլ իրավեսական չէ:

Լիցենզավորման հիմնահարցերի և կապարված օրենսդրական փոփոխությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության կողմից քայլեր են ձեռնարկվում լիցենզավորման գործընթացները պարզեցնելու, ընթացակարգերը և ծախսվող ժամանակահատվածը կրճատելու և դրանով իսկ գործարարությանը զբաղվելու “Doing Business”-ի վարկանիշային աղյուսակում ՀՀ դիրքերը բարելավելու համար:

